Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# Լուսարար

10-11(685-686)
29.04.2023
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

# ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈ՞Ց, ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵ՞Ր, ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱ՞Ց...

## ՈՒՂԵՐՁ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Արցախի Հանրապետության նախագահի Արայիկ Հարությունյանն ապրիլի 24-ին ուղերձ է հղել Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ:

Ուղերձում ասված է.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Ամեն տարի ապրիլի 24-ին մենք ազգովի հիշում և ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, մեր 1,5 միլիոն սուրբ նահատակների, որ դարձան թուրքական յաթաղանի զոհ միայն այն բանի համար, որ հայ էին:

Մարդկության դեմ ուղղված այդ հրեշավոր ոճրագործությունը վաղեմության ժամկետ չունի: Եվ քանի դեռ այն չի ճանաչվել ու դատապարտվել ամբողջ քաղաքակիրթ աշխարհի կողմից, մենք կարող ենք ականատես լինել ցեղասպանության նոր դրսևորումների ողջ աշխարհում:

Այսօր Արցախը կանգնած է թուրք-ադրբեջանական հայատյաց ու ցեղասպանական քաղաքականության նոր և իրական վտանգների առջև: Մեծ Եղեռնից 108 տարի անց էլ հայը շարունակում է կենացմահու պայքար մղել իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու, սեփական իրավունքն ու ազատությունը, ազգային շահերն ու արժանապատվությունը պաշտպանելու համար:

134 օր շարունակվող շրջափակման մեջ պահելով Արցախի 120 հազար խաղաղ բնակչությանը, տասնյակ հազարավոր երեխաների ու ծերերի, ոտնահարելով միջազգային իրավունքի բոլոր նորմերն ու սկզբունքները, անտեսելով միջազգային հանրության հորդորները և ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը՝ Ադրբեջանի բռնապետական իշխանությունները փորձում են ծնկի բերել մեր ժողովրդին:

Սակայն մենք անդրդվելի ենք ու վճռական Արցախը միշտ հայկական ու անառիկ պահելու ճանապարհին: Մենք այլընտրանք չունենք: Հայը չի կարող նորից հայրենիք կորցնել, դառնալ տարագիր ու սփռվել աշխարհով մեկ: Մենք պետք է դասեր քաղենք անցյալից ու միասնաբար կերտենք հայ ժողովրդի ապագան՝ այսօր և այստեղ:

Պահն օրհասական է, լինել-չլինելու հարց է ոչ միայն Արցախի, այլև՝ հայոց պետականության համար: Այսօր քան երբևէ պետք է խոսքից անցնել գործի: Համազգային պատասխանատվության, արժանապատվության, պահանջատիրության պահն է՝ կանգնել Արցախի կողքին և կանխել նորանոր համազգային ողբերգություններն ու ձախողումները:

Ուստի, ապավինելով Մայր Հայրենիքին, աշխարհասփյուռ հայությանը և օտարերկրյա բարեկամներին՝ մենք բոլոր կազմակերպություններին ու սրտացավ անձանց խնդրում ու հորդորում ենք կիրառել բոլոր հնարավոր գործիքակազմերը՝ ի պաշտպանություն Արցախի մաքառող ժողովրդի, հանուն հայոց համազգային շահերի և համամարդկային արժեքների:

Աստված պահապա՛ն հայ ազգին»:

# ՍՈՒԳԸ ՀԱՎԵՐԺ Է, ԵԹԵ ՑԵՂԱՍՊԱՆՈՂ ԹՇՆԱՄՈՒՑԴ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՄՈՒՐՈՒՄ ԵՎ ԳԹՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՐՍՈՒՄ

*ԱՀ կրթությա,ն գիտության, մշակույթի և սպորտի նախարար **Նորայր ՄԿՐՏՉՅԱՆԻ** խոսքը Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին նվիրված ջահերով երթի ժամանակ.*

Հարգելի՛ հայրենակիցներ,

Այսօր կրկին մեր նվիրական մտորումները 20-րդ դարասկզբին թուրքական յաթաղանից ողջակիզված մեր միլիոնավոր հայրենակիցների հետ են: Այսօր Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին իրենց գետնատարած խոնարհումը բերող ջահերթի մասնակից արցախցիներիս խանդավառ սրտերը տրոփում են աշխարհի չորս ծագերում ծվարած, եղեռնապուրծ հայության սերունդների սրտերի հետ համահունչ: Նրանց հետ, ովքեր իրենց հոգու խորքում շարունակում են կրել հայոց պատմության ընթացքում մեր իսկ հայրենիքում մեր դարավոր թշնամու անմեղ զոհը դարձած հայության վրիժառության կանչող խորհուրդը, և որին հաղորդակցվելու պատիվը տրվում է միայն ու միայն ընտրյալներին:

Նպատակ չհետապնդելով խոր վերլուծության ենթարկել մեր ազգի համար ճանակատագրական դարձած հայոց պատմության արյունոտ էջերը՝ եկեք այսօր և այսուհետ բոլոր ժամանակներում հայության դեմ գործած բոլոր ոճիրների հետևանքով ի հիշատակն անմեղ զոհերի սահմանված օրը, սկսած 19-րդ դարի վերջից մինչև հիմա, հռչակենք որպես ազգային վրիժառության և հատուցման օր, քանզի վաղուց, շատ վաղուց մենք պիտի հասկանայինք այն կենսաբարոյական ճշմարտության իմաստը, որ համազգային սուգը հավերժ է, եթե պայքար չկա: Սուգը հավերժ է, եթե ցեղասպանող թշնամուցդ խաղաղություն ես մուրում և գթություն աղերսում:

Եվ այժմ Հայոց ցեղասպանության զոհերի անհանգիստ հոգիները, միաձուլված հանուն հայրենիքի նահատակված մեր հազարավոր զինակիցների լուսավոր հոգիներին, իրենց անշիրիմ վայրերից և սուրբ հանգստարաններից միաձայն աղաղակում են և մեզ հրամայում՝ վրե՛ժ հանուն արդարության, վրե՛ժ հանուն ազգային արժանապատվության, վրե՛ժ հանուն կորուսյալ հայրենիքի, հանուն կյանքի, հանուն գալիք սերունդների:

Սիրելի՛ արցախցիներ, Ցեղասպանության զոհերի հիշատակը խնկելու համար բնավ առիթներ պետք չեն, և մենք այսօր ներկա ենք այս միջոցառմանը ոչ թե պարտականությունից դրդված, այլ մեր վիրավոր, բայց չծնկած Արցախը ամեն գնով պաշտպանելու սրբազան ուխտը վերաիմաստավորելու և վերագնահատելու անխախտ համոզմունքով: Այդ սրբազան ուխտն է մեզ անշեղորեն առաջնորդում հայրենասիրությունից դեպի հայրենատիրություն, Գոյապայքարից դեպի համազգային մաքառում, երկրային կյանքից դեպի հավերժություն: Ուրեմն՝ հավերժ փա՛ռք մեր բոլոր նահատակներին: Կեցցե՛ պայքարող Արցախը:

# ԲՈԼՈՐԸ՝ ԱՆԿԱԽ ՍԵՌԻՑ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ, ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵՆ ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը նպաստում են նաև «Արծվիկ» ռազմամարզական խաղերը, որոնք ավանդաբար ամեն տարի անցկացվում են հանրակրթական ու միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների նախազորակոչային տարիքի պատանիների շրջանում՝ ընդգրկելով նաև աղջիկների:

Ապրիլի 25-27-ը Ստեփանակերտում անցկացվեց 2022-2023 ուսումնական տարվա «Արծվիկ»-ի հանրապետական փուլը: ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ու Պաշտպանության նախարարությունների կողմից կազմակերպվող ամենամյա այս միջոցառումը հերթական մի ստուգատես է, որը ցուցադրում է սովորողների պատրաստականությունն ու պատասխանատվությունը հայրենիքի պաշտպանության գործում: Հանրապետական փուլին այս տարի մասնակցել են ավելի շատ թիմեր՝ բնականաբար ընդգրկելով



ավելի շատ մասնակիցների: ԱՀ ԿԳՄՍՆ նախնական զինվորական պատրաստության և արտադպրոցական ծրագրերի վարչության պետ Ստեփան Օհանջանյանի վկայությամբ, եթե նախորդ տարի մասնակցում էր 4 թիմ, ապա այս տարի՝ 9. Ստեփանակերտի հ.11 ավագ, Ասկերանի շրջանի Խնածախի, Պատարայի, Մարտունու հ. 1, Գիշու, Մարտակերտի հ. 1, Վանքի, Հադրութի Մ. Մանվելյանի անվան և Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցների թիմերը, որոնք մրցումների շրջանային (քաղաքային) փուլում գրավել էին 1-ին և 2-րդ տեղերը:

«Յուրաքանչյուրն ակտիվ մասնակցությամբ պետք է իր լուման ներդնի մեր հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, քանի որ նման խաղերի միջոցով մենք կոփում ենք մեր կամքը, զարգացնում ֆիզիկական ունակությունները, բարձրացնում ռազմական գործի տիրապետման աստիճանը»,- խաղերի բացմանը մասնակիցներին իր ողջույնի խոսքում ասել է ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը՝ համոզմունք հայտնելով, որ ապագա հաղթանակները կերտվում են նաև նման միջոցառումների շնորհիվ:

«Այս տարի «Արծվիկ» ռազմամարզական խաղերն ունեն այլ առանձնահատկություն ու խորհուրդ: Այն կոչված է հայրենասիրության բազմապատկման, հետպատերազմյան ծանր շրջանը և Արցախի շրջափակումը միասնական ուժերով հաղթահարելու գաղափարին»,- ասում է ԱՀ ԿԳՄՍ նախարարության ՆԶՊ և ԱԾ վարչության ՆԶՊ բաժնի վարիչ Դավիթ Օհանջանյանը: Նրա համոզմամբ, հանձին պատանի զինվորների՝ արցախցին դեռ կռելու է հաղթանակներ:

Եռօրյա մրցումների ընթացքում թիմերը մրցել են ֆիզիկական ու շարային պատրաստություն, հրաձգություն, ինքնաձիգի ոչ րիվ քանդում-հավաքում, պահեստատուփի լիցքավորում, քաղպաշտպանություն, առաջին բուժօգնություն մարզաձևերում: Պատվավոր 1-ին տեղը զբաղեցրեց Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան ավագ դպրոցի ջոկը:

☞2

ԸՆԹԱՑՔ

# ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ՇՐՋԱՓԱԿՎԱԾ ԱՐՑԱԽՈՒՄ



Շրջափակման մեջ գտնվող Արցախում, բոլոր դժվարություններով հանդերձ, կրթությունն ընթանում է իր հունով: Հանրակրթական տարվա գլխավոր միջոցառումներից է առարկայական օլիմպիադայի անցկացումը: Արցախը արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը Ադրբեջանը դեկտեմբերի 12-ից փակելու, ապա մեր երկիր մտնող գազատարը արգելափակելու պատճառով, երբ դպրոցները ցրտի պատճառով չէին գործում, անգամ այդ պայմաններում օլիմպիադայի անցկացումը չէր կասեցվել: «Դժվարություններ եղել են, բայց ամեն դեպքում գործընթացն իրականացրել ենք»,- մեզ հետ զրույցում ասաց ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար, օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Միքայել Համբարձումյանը, որն այդ օրերին նպատակահարար չէր գտել օլիմպիադայի ընթացքը լուսաբանել ԶԼՄ-ներով՝ ասելով, որ արտակարգ բան չեն անում, իրենց գործն է, պետք է անեն՝ ինչ պայմաններ էլ լինեն: «Ի վերջո, հակառակորդի նպատակը մեկն է՝ անտանելի պայմաններ ստեղծելով՝ կյանքը կանգնեցնել Արցախում, ձեռքներս հո չպե՞տք է վեր բարձրացնենք: Ինչպես ասում են, մարտահրավերները նոր հնարավորություն են, ուրեմն, պետք է գործել»,- դժվարությունները՝ որպես չաշխատելու պատճառ մերժող կրթության պատասխանատուն ամեն կերպ խուսափում էր դրանց անդրադառնալուց՝ փոխարենը կարևորելով ստեղծված պայմաններում հնարներ գտնելը:

Անպայման տվյալ ժամանակում օլիմպիադայի անցկացման պատճառն այն էր, որ Արցախը դուրս չմղվեր ՀՀ ժամանակացույցից: Այն ընդհանուր է, որը նախարարի հրամանով հաստատվում է ՀՀ օլիմպիական կազմկոմիտեի որոշմամբ: Յուրաքանչյուր առարկայի օլիմպիադան ՀՀ-ում և Արցախում անց է կացվում նույն օրը, նույն ժամին, որպեսզի տեղեկատվության արտահոսք չլինի առաջադրանքների մասով: Հակառակ պարագայում արդյունքներն իրական և արդարացի չէին լինի: Նշենք, որ բնագիտական առարկաների օլիմպիադայի շրջանային և բոլոր 15 առարկաների հանրապետական փուլի առաջադրանքները կազմվում են ՀՀ մասնագիտական հանձնաժողովի կողմից: Մ. Համբարձումյանի խոսքով՝ բոլոր հնարավոր միջոցները գործադրել են, որպեսզի տեղավորվեն ժամանակացույցի մեջ:

Հունվարին անցկացվել է ԱՀ հանրապետական փուլը, իսկ փետրվարի 22-ից մեկնարկել է ՀՀ եզրափակիչ փուլը, որը տևելու է մինչև մայիս: Առաջադրանքները ստացվել են առցանց տվյալ առարկայի անցկացման ժամից տասը րոպե շուտ, արագ բազմացվել և ՀՀ-ի հետ համաժամանակյա անց է կացվել Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում: Նախատեսված 15 առարկայից հանրապետական փուլում անց է կացվել 12-ից, քանի որ աստղագիտությունից ընդհանրապես մասնակիցներ չեն եղել (տարիներ շարունակ այդպես է), իսկ ինֆորմատիկային մասնակցած մի քանի հոգին զրոյական արդյունք են ունեցել: Ցավոք, այս տարի նույն վիճակում է հայտնվել նաև ֆիզիկան:

Կարող է թվալ, որ եթե շրջափակման պատճառով ՀՀ եզրափակիչ փուլ անցած դպրոցականներն Արցախում են մասնակցել օլիմպիադային, հնարավորություն ունեին ավելի հեշտ միավորներ վաստակել այլևայլ ճանապարհներով: Բայց այդպես չէր. օլիմպիադան անց է կացվել անաչառ ձևով՝ պահպանվելով բոլոր կանոնները: Դպրոցականներից մեկը, որը մի քանի անգամ Երևանում մասնակցել է եզրափակիչ փուլին, ասել էր, որ այստեղ ավելի խիստ են անցկացնում, իսկ այնտեղ, օրինակ, եղել են դեպքեր, երբ մասնակիցների ձեռքին հեռախոս կար:

Այսքանը՝ կազմակերպչական մասի վերաբերյալ: Իսկ այժմ ներկայացնենք քանակական և որակական տվյալները:

Օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահի խոսքով, ամենաշատ (440 հոգի) մասնակիցներ շրջանային (քաղաքային) փուլում եղել են մաթեմատիկայից, քանի որ մասնակցել են աշակերտներ՝ սկսած 5-րդ դասարանից, իսկ մյուս առարկաներից մասնակցել են 9-րդ դասարանից բարձր դպրոցականները: Փոքր-ինչ խորանալով վիճակագրության մեջ՝ տեսնում ենք, որ մաթեմատիկայի մասնակիցների մեծ մասը 5-7-րդ դասարանների երեխաներ էին, ինչն ավելի երևակվեց արդյունքներում: Հանրապետական փուլ անցած 27 հոգուց երկուսն էին 9-րդ դասարանից բարձր: Սա ևս մեկ բանի մասին էլ է խոսում, ինչը շոշափեցինք Մ. Համբարձումյանի հետ: Դա ցույց է տալիս, որ Արցախի երեխաները ներուժ ունեն, ինչը հետագայում մարում է նրանց մեջ: Տեխնիկական հագեցվածության տեսակետից մեր կրթօջախները վատ վիճակում չեն, գումարած՝ արտադպրոցական հիմնարկները՝ «Արմաթ» լաբորատորիաներ, «Թումո» տուփեր, առցանց ուսուցման հնարավորություններ և այլն, բայց դարձյալ բնագիտամաթեմատիկական ուղղությամբ առաջընթաց չի նկատվում: Ինչո՞ւ: Մ. Համբարձումյանի բացատրությամբ՝ բարձր դասարաններում նրանց հետ համապատասխան աշխատանք չի տարվում: Դա էլ, ըստ նրա, ունի իր պատճառը: Հիմնական խնդիրը մասնագետների մեջ է: Խոսքը միայն մաթեմատիկային չի վերաբերում: Բնագիտական ցիկլի առարկաների մեծ մասը մեր դպրոցներում հիմնականում ոչ մասնագետներն են ուսուցանում, լավագույն դեպքում՝ հարակից առարկաների ուսուցիչները:

«Ինչքան էլ արհեստական բանականությանը դիմենք, հեռավար ուսուցմանը, եթե չկա մասնագետի հետ անմիջական շփում, լավ արդյունք չի կարող լինել: Մարդկությունը դրանից՝ կենդանի շփումից ավելի լավ բան դեռ չի հնարել: Պատահական չէ, որ այբուբենը սովորեցնելիս երեխայի ձեռքը բռնում են: Անմիջական շփումը, ուսուցչի՝ երեխայի կողքին լինելը ամենալավ բանն է»,- այս կարծիքին է Մ. Համբարձումյանը:

Ինչ վերաբերում է հումանիտար առարկաներին, դեռ որոշ շարժ կա: Ամենաշատ մասնակիցները եղել են ռուսաց, հայոց, անգլերեն լեզուներից: ՀՀ եզրափակիչ փուլ է անցել 56 հոգի. հումանիտար առարկաներից՝ 33, բնագիտականից՝ 16: Ինն անգամ անընդմեջ Երևանում առաջին տեղը գրաված Արցախի ՆԶՊ յոթ հոգանոց թիմը շրջափակման պատճառով այս տարի երևի եզրափակիչ փուլին չմասնակցի, քանի որ այն առցանց հնարավոր չէ անցկացնել:

Այդ 49 մասնակիցներից 23-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի. 9 -ը՝ մրցանակային տեղ, այդ թվում՝ 1 առաջին, 2՝ երկրորդ, 6՝ երրորդ տեղ և 14-ը՝ գովասանագիր: Արժե նշել, որ մրցանակային 3-րդ տեղ գրավածների մեջ են երկու 5-րդ դասարանցիներ:

Միակ առաջին կարգի դիպլոմակիրը Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սլավա Սեյրանյանն է: Ի դեպ, նա առաջին տեղում է նաև մրցանակների քանակով. ռուսաց լեզվից գրավել է երկրորդ տեղը, հայոցից արժանացել գովասանագրի:

Ընդհանուր առմամբ, շրջափակման պայմաններում անցկացված օլիմպիադան Մ. Համբարձումյանը բավարար է գնահատում: Կարևորը՝ շղթան չի կտրվել: Կրթությունը չի ընդունում հարկադիր դադարներ ցանկացած պարագայում: Շրջափակված Արցախում ամեն գնով պահպանվում է նրա ընթացքը:

Տեղեկություններ ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական եզրափակիչ փուլում մրցանակային տեղ գրաված սովորողների մասին 01.04.2022թ.

| Հ/Հ | Ազգանուն | Անուն | Դաս | Մարզ | Կրթօջախ | Միավորը | Դիպլոմ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պետրոսյան | Արգիշտի | 5 | Արցախ | Ստեփանակերտ N10 հ/դ | 10 | III կարգ | Մաթեմատիկա |
| 2. | Խաչատրյան | Ռուդիկ | 5 | Արցախ | Ստեփանակերտ N5 հ/դ | 10 | III կարգ | |
| 3. | Գրիգորյան | Անահիտ | 6 | Արցախ | Ստեփանակերտ N1 հ/դ | 10 | Գով | |
| 4. | Թևոսյան | Մաքսիմ | 10 | Արցախ | Ասկերան, Ասկերանի մ/դ | 23.25 | Գով | Աշխարհագրություն |
| 5. | Պետրոսյան | Սլավիկ | 10 | Արցախ | Մարտակերտ, Վաղուհասի մ/դ | 21.25 | Գով | |
| 6. | Չիլինգարյան | Մարթա | 11 | Արցախ | Մարտակերտ, Վանքի մ/դ | 16.5 | Գով | |
| 7. | Գալստյան | Արամ | 12 | Արցախ | Ասկերան, Նորագյուղի մ/դ | 21.5 | III կարգ | |
| 8. | Հայրապետյան | Բենիամին | 11 | Արցախ | Ստեփանակերտ, N11 ա/դ | 24.83* | Գով | Քիմիա |
| 9. | Բախշիյան | Կարինե | 9 | Արցախ | Ասկերանի մ/դ | 24.5 | III կարգ | Պատմություն |
| 10. | Թովմասյան | Եվգենյա | 11 | Արցախ | Մարտունի, Մարտունու N1 մհ/դ | 24.5 | Գով | |
| 11. | Շահրամանյան | Սվետլաննա | 10 | Արցախ | Ասկերանի մ/դ | 18.7 | Գով | Անգլերեն |
| 12. | Հարությունյան | Արգինե | 10 | Արցախ | Մարտունի, Ճարտարի N1 մհ/դ | 18.65 | Գով | |
| 13. | Սեյրանյան | Սլավա | 11 | Արցախ | Ստեփանակերտ, N11 ա/դ | 18.65 | II կարգ | |
| 14. | Այդինյան | Նարինե | 10 | Արցախ | Մարտունի, Ճարտարի N1 մհ/դ | 16.5 | III կարգ | Հայոց լեզու |
| 15. | Հակոբյան | Արփինե | 11 | Արցախ | Մարտունի, Ճարտարի N1 մհ/դ | 15.18 | Գով | |
| 16. | Սեյրանյան | Սլավա | 11 | Արցախ | Ստեփանակերտ, N11 ա/դ | 14.6 | Գով | |
| 17. | Մելքումյան | Մանե | 11 | Արցախ | Հադրութի մ/դ | 12.5 | Գով | Գրականություն |
| 18. | Սարգսյան | Անի | 11 | Արցախ | Մարտունի, [illegible]երդաշենի մ/դ | 12 | Գով | |
| 19. | Իշխանյան | Վիկա | 11 | Արցախ | Ստեփանակերտ, N11 ա/դ | 12 | Գով | |
| 20. | Բաբայան | Արմեն | 8 | Արցախ | Ստեփանակերտ, N3 մ/դ | 25 | Գով | Ռուսաց լեզու |
| 21. | Բաբայան | Մարիաննա | 10 | Արցախ | Ստեփանակերտ, N3 մ/դ | 30 | II կարգ | |
| 22. | Սաֆարյան | Տիգրան | 10 | Արցախ | Ստեփանակերտ, N3 մ/դ | 28 | III կարգ | |
| 23. | Սեյրանյան | Սլավա | 11 | Արցախ | Ստեփանակերտ, N11 ա/դ | 28 | III կարգ | |

# ...ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵՆ ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

1 ☜ 2-րդ տեղում Ասկերանի շրջանի Խնածախի Ա. Ավագյանի անվան, 3-րդ տեղում Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցների ջոկերն են:

Մրցանակային տեղեր էին նախատեսված նաև անհատական հաշվարկով լավագույն ցուցանիշներ արձանագրած մասնակիցների համար: 1-ին և 2-րդ տեղերը բաժին հասան Խնածախի ջոկի անդամներ Թամարա Սարգսյանին և Անժելիկա Վարդանյանին, 3-րդ տեղը՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցից Մոնթե Ղարախանյանին: Վերջինս, ի դեպ, իր հավասարը չուներ հրաձգություն մարզաձևում: Առաջին տեղում էր նաև հ. 11 դպրոցից Գևորգ Գրիգորյանը՝ քաղաքացիական պաշտպանությունից: «Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ բոլորը, անկախ սեռից ու մասնագիտությունից, պետք է պատրաստ լինեն երկրի պաշտպանությանը և, ինչու չէ, տիրապետեն ողջ մնալու արվեստի հիմունքներին»,- կարծում է լավագույն ջոկի հրամանատար ճանաչված՝ հ. 11



ավագ դպրոցի թիմի ղեկավար Արմեն Բաբայանը: Նա, ինչպես նաև թիմակից Արսեն Ասրյանը, որը լավ ցուցանիշներ ունի թեթև աթլետիկայից, պատրաստվում են ընդունվել Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանը, այն տեսակետին են, որ բժիշկները պետք է լավ մարզավիճակում լինեն, որպեսզի կարողանան պատերազմի ժամանակ մարտադաշտից վիրավորներին արագ դուրս բերել և բժշկական օգնություն ցուցաբերել: Նման կարծիք հայտնեց նաև նույն ջոկից Սյուզան Ավանեսյանը, որը նույնպես ցանկանում է բժիշկ դառնալ՝ դիմածնոտային մասնագետ: Նրա ցուցանիշները բարձր են առաջին օգնությունից: «Փաստորեն «Արծվիկ» խաղերը քեզ համար դարձան գործնական պարապմունքների յուրատեսակ դաշտ»,- եզրակացությունս հայտնեցի նրան: Բնականաբար բոլոր մասնակիցների հետ հարցում չանցկացրինք: Այնուամենայնիվ, եղածն էլ բավարար էր՝ կարծիք կազմելու, որ «Արծվիկ»-ը նաև մասնագիտական կողմնորոշման խթան է: Այսպես, 11-րդ դպրոցից Արգինե Գրիգորյանը, որը մի քանի անգամ մասնակցել է ՆԶՊ-ի օլիմպիադային, ցանկանում է ուսումը շարունակել ռազմական գծով: Նա համոզմունք ունի, որ ամենալավ դիպուկահարներն աղջիկներն են: Ասում է, որ այդ մասին գիտի Արցախյան գոյամարտի պատմությունից: Պատրաստվում է ընդունվել ՀՀ ռազմական ինստիտուտ, ապա շարունակել ՌԴ ակադեմիայում: Խնածախի թիմից 2-րդ տեղը գրա-



ված Անժելիկա Վարդանյանը, որն ի դեպ, օկուպացված Քարին տակ գյուղից է, առաջին անգամ է մասնակցում նման միջոցառման և արդեն հստակ որոշում է կայացրել. պետք է ընդունվի ԱրՊՀ ՆԶՊ բաժինը:

44-օրյա պատերազմը և այս բախտորոշ իրավիճակը նոր սերնդի մոտ ոչ թե ընկճվածության, այլ ուժեղանալու և հաղթելու մեծ ձգտում են առաջացրել.

«Արծվիկ» խաղերը հաջողությամբ անցկացնելու և քանակական ու որակական բարձր արդյունքներով եզրափակելու կապակցությամբ և մրցանակակիրներին պարգևատրելով՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար Ն. Մկրտչյանը շնորհավորելու հետ մեկտեղ նաև շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, զինղեկներին, դպրոցների տնօրինությանը, բոլոր նրանց, ովքեր նախապատրաստել են թիմերին. «Լիահույս եմ, որ հաջորդ խաղերին մենք նախապատրաստվելու ենք ավելի բարձր մակարդակով՝ ի նպաստ մեր երկրի, մեր հայրենիքի, մեր ժողովրդի պատվի»:

**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

«17» ապրիլի 2023թ. N 31/Մ հրամանի

ք. Ստեփանակերտ

## 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 535/Մ հրամանով սահմանված հավելվածի 2-րդ կետը`

*ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը` համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ն.Նիկողոսյանին` հաստատված ժամկետները տեղադրել նախարարության edu.nk.am կայքէջում, «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին` հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիիկա համարում:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

**Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
«17» ապրիլի 23թ.
N 31/Մ հրամանի

### ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
### 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

**12-րդ դասարան**

| ԱՌԱՐԿԱ | ՕՐԵՐ |
|---|---|
| Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր) | 07.06.2023թ. |
| Հայոց պատմություն (գրավոր) | 14.06.2023թ. |
| Մաթեմատիկա (գրավոր) | 21.06.2023թ. |
| «Ռուսաց լեզու»՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար | քննաշրջանի ընթացքում |

**9-րդ դասարան**

| ԱՌԱՐԿԱ | ՕՐԵՐ |
|---|---|
| Հայոց պատմություն (բանավոր) | քննաշրջանի ընթացքում |
| Գրականություն (բանավոր) | քննաշրջանի ընթացքում |
| Օտար լեզու («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ բանավոր | քննաշրջանի ընթացքում |
| Հայոց լեզու, (գրավոր թեստ) | 05.06.2023թ. |
| Մաթեմատիկա (գրավոր թեստ) | 12.06.2023թ. |
| Բնագիտություն («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ առարկայից՝ գրավոր, | 19.06.2023թ. |
| Ֆիզկուլտուրա՝նորմատիվների հանձնում | քննաշրջանի ընթացքում |
| «Ռուսաց լեզու»՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար | քննաշրջանի ընթացքում |

**4-րդ դասարան**

| ԱՌԱՐԿԱ | ՕՐԵՐ |
|---|---|
| Մայրենի (գրավոր) (թեստ) | 08.06.2023թ. |
| Մաթեմատիկա (գրավոր) (թեստ) | 13.06.2023թ. |
| «Ռուսաց լեզու»՝ (բանավոր) ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար | քննաշրջանի ընթացքում |

*Հավելված*
*Արցախի Հանրապետության*
*կրթության, գիտության, մշակույթի*
*և սպորտի նախարարի*
*27 դեկտեմբերի 2022թ.*
*595/41 հրամանի*

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
## ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ` Հաստատություն) 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը:

2. Յուրաքանչյուր տարվա 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննությունների անցկացման օրերը հաստատվում են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ` Նախարար) անհատական իրավական ակտով:

3. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է`

1) ա. «Մայրենի» առարկայից` գրավոր (թեստ). քննության տևողությունը` 60 րոպե.

բ. «Մաթեմատիկա» առարկայից` գրավոր (թեստ). քննության տևողությունը` 60 րոպե.

գ. ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար` նաև «Ռուսաց լեզու» առարկայից բանավոր` քննաշրջանի ընթացքում.

2) ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների ցանկության դեպքում «Մաթեմատիկա» առարկայի թեստերը թարգմանվում են ռուսերեն.

3) գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (4 տարբերակով) կազմում են Հաստատության մեթոդմիավորումները` ըստ Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ` ԳԹԿ) կողմից մշակված նմուշների. առաջադրանքների նյութերն ընտրվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ` Նախարարություն) կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից.

4) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքների թեստերը, կնքում և ծրարում. ծրարը բացվում է գիտելիքների ստուգման օրը քննասենյակում` սովորողների ներկայությամբ.

5) գրավոր աշխատանքը գնահատվում է 10-միավորանոց համակարգով.

6) գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը.

☞4

## ԿԱՐԳ

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

3☜ 7) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:

4. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 15 օրվա ընթացքում:

5. 9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝

1) «Հայոց լեզու» առարկայից կենտրոնացված՝ գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե.

2) «Գրականություն» առարկայից՝ բանավոր.

3) «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր.

4) «Մաթեմատիկա» առարկայից կենտրոնացված գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե.

5) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 90 րոպե.

6). «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր.

7). «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում).

8). Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները՝ նաև «Ռուս գրականություն» առարկայից բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

6. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝ «Բնագիտություն («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայի ավարտական քննության թեստը սովորողի ցանկության դեպքում թարգմանվում է ռուսերեն:

7. 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու և գնահատելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Հաստատության տնօրենը կամ նրա նշանակած ներկայացուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) և ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ): Ելնելով սովորողների թվից՝ բանավոր քննությունը կարող է կազմակերպվել 1-ից ավելի օրերում:

8. Սովորողը քննասենյակ է մտնում անվանացանկում նշված հերթականությանը համապատասխան, ստորագրում է իր անվան դիմաց, ընտրում քննատոմսը, ստանում բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները:

9. Սովորողի պատասխանը գնահատվում է 20-միավորանոց համակարգով:

10. «Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների 9-րդ դասարանի ավարտական քննությունների տոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված և տրամադրված հարցաշարերի և տոմսերի նմուշների: «Գրականություն» և «Օտար լեզու» առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը և տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

11. Բանավոր քննությունները ձայնագրվում կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և տվյալ սովորողը:

12. 9-րդ դասարանում ավարտական քննություններն անցկացվում են հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:

13. 9-րդ դասարանի կենտրոնացված ավարտական և ավարտական քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը Հաստատության տնօրենը լրացնում և ԳԹԿ-ին է փոխանցում փետրվարի 20-ից մինչև մարտի 10-ը:

14. 12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ՝

1) «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկայից գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե.

2) «Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե.

3) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե.
4) «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգարք). հունիսի 6-րդ աշխատանքային օրվանից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում.

5) «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար)՝ քննաշրջանի ընթացքում:

15. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝ 10 օրվա ընթացքում և հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:

16. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդներին «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություններին կարող են մասնակցել հունվարին կամ հունիսին, իսկ նույն առարկաները որպես պետական ավարտական քննություններ ընտրելու դեպքում՝ միայն հունիսին:

17. Հունվարին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր դիմում են Հաստատության տնօրենին. հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 5-ից մինչև 20-ը քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

18. Հունիսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև ապրիլի 1-ը գրավոր դիմում են Հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը ապրիլի 2-ից մինչև ապրիլի 25-ը ներառյալ քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

19. Ե՛վ հունվարին, և՛ հունիսին միասնական քննություններ հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի ավելի բարձր դրական գնահատականը (միավորը):

20. Միևնույն առարկայից և՛ միասնական, և՛ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

21. Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ քննական կենտրոնի ղեկավարն է:

22. Կենտրոնացված ավարտական քննությունները կազմակերպվում են առանձնացված քննական կենտրոններում: Քննական կենտրոնների ցանկը և կենտրոնների ղեկավարների ցուցակը հաստատում է Նախարարը՝ ԳԹԿ տնօրենի ներկայացմամբ:

23. Ավարտական և պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը 10.00-ին: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 9.00-ին:

24. Կենտրոնացված ավարտական քննությունը սկսվում է ժամը 11.00-ին: Սովորողները քննական կենտրոններ են ներկայանում ժամը 10.00-ին:

25. 9-րդ և 12-րդ դասարաններում ավարտական և պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից և Հաստատությունում գործածվող դասագրքերից և (կամ) ձեռնարկներից:

26. «Ֆիզկուլտուրա» առարկայի 9-րդ դասարանում ավարտական քննությունը և 12-րդ դասարանում ամփոփիչ ստուգարքն ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:

27. Մեդալի հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ Նախարարության հաստատած ցուցակի համաձայն: Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:

28. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

29. 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվող «Ռուսաց լեզու» և «Ռուս գրականություն» (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի և նյութերի հիման վրա:

30. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների՝ հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով (ԱՈւՊ) իրականացված գնահատման հիման վրա:

31. Ավարտական, պետական ավարտական քննությունը սկսվելուց առնվազն 1 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական նյութերի (թեստերի, պատասխանների ձևաթղթերի) փաթեթները:

32. Քննական կենտրոնում քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են կազմակերպիչները: Կենտրոնացված քննական կենտրոնում քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են ԳԹԿ ներկայացուցիչներն ու կազմակերպիչները, որոնց կազմը հաստատում է ԳԹԿ տնօրենը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

33. Կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ ԳԹԿ ներկայացուցչի կազմակերպած վիճակահանության միջոցով: Նույն օրը ԳԹԿ ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը:

34. Քննական կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

35. Ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների հերթապահներին նշանակում է քննական կենտրոնի ղեկավարը:

36. Քննական կենտրոններում սովորողները բաշխվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբում կարող է լինել ոչ ավելի, քան 20 սովորող: Մինչև 20 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 1 կազմակերպիչ: 20-ից ավել սովորող ունեցող քննասենյակում՝ յուրաքանչյուր 20 սովորողի համար՝ 1 կազմակերպիչ, վերջին (1-20) սովորողի համար՝ ևս 1 կազմակերպիչ:

37. Քննական կենտրոնի ղեկավարը քննությունը սկսվելուց 1 ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում, ջերմաչափում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ խմբերի:

38. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ պատասխանատու կազմակերպիչը քննական կենտրոնի ղեկավարից ստանում է իր քննասենյակի յուրաքանչյուր խմբի սովորողների ցուցակ-արձանագրությունները, կենտրոնացված ավարտական քննությունների ժամանակ՝ նաև առաջադրանքների պատասխանների ձևաթղթերի ծրարները: Պատասխանների ձևաթղթերի ծրարը, բացի 20 պատասխանների ձևաթղթերից, որոնք բաժանվում են սովորողներին, պարունակում է լրացուցիչ պատասխանների ձևաթղթեր, որոնք օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խոտանման դեպքում:

39. Սովորողների մուտքը քննական կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

## ԿԱՐԳ

40. Սովորողը քննություններին ներկայանում է դիմակով, անձը հաստատող փաստաթղթով (ծննդյան վկայական, անձնագիր, նույնականացման քարտ), կենտրոնացված ավարտական քննության մասնակիցները՝ նաև Հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով: Մեդալի հավակնորդները՝ անձնագրով և Հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով:

41. Սովորողը մոտենում է նախասրահի վիճակահանության սեղանին, վիճակահանության թերթիկի միջոցով ընտրում է իր խմբի համարը:

42. Սովորողի մուտքը քննասենյակ կազմակերպվում է պատասխանատու կազմակերպչի կողմից: Սովորողը մոտենում է իր խմբի կազմակերպչին: Խմբի կազմակերպիչը սովորողների ցուցակում գրում է սովորողի ազգանունը, անունը, հայրանունը, ըստ կատարված վիճակահանության՝ նշում է սովորողի նստարանի համարը, կենտրոնացված ավարտական քննությունների ժամանակ նաև սովորողին տրամադրում է պատասխանի ձևաթղթի մեկ օրինակ՝ համապատասխան մասում գրելով խմբի համարը և խմբի ցուցակում սովորողի համարը, այնուհետև սովորողը ստորագրում է ցուցակի համապատասխան վանդակում՝ իր անվան դիմաց:

43. Սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց ձեռնարկներ:

44. Քննասենյակում չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:

45. Սովորողներին քննասենյակում տեղավորելուց հետո պատասխանատու կազմակերպիչը բացատրում է քննության անցկացման, պատասխանների ձևաթղթերի լրացման կարգը և հրահանգում, որ սովորողները պատասխանի ձևաթղթերում լրացնեն Հաստատության տվյալները (եթե նախատեսված է առանձին պատասխանի ձևաթուղթ):

46. Քննասենյակի կենտրոնի ղեկավարը քննասենյակ է բերում քննական թեստերի ծրարները: Թեստերի ծրարները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին նստարանի սովորողների բացակայության դեպքում հրավիրում է հաջորդ նստարանին նստած սովորողին: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ, այնուհետև կազմակերպիչները բաժանում են թեստերը: Սովորողը թեստն ստանալուն պես շապիկի համապատասխան մասում գրում է իր նստարանի համարը, կենտրոնացված ավարտական քննության ժամանակ առանձին պատասխանի ձևաթղթի համապատասխան վանդակում նշում է իր թեստի տարբերակի համարը: Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում կատարում քննության սկզբի և ավարտի վերաբերյալ:

47. Քննության ընթացքում պատասխանատու կազմակերպիչը կարող է խիստ անհրաժեշտության դեպքում սովորողին թույլատրել հերթապահի ուղեկցությամբ դուրս գալ քննասենյակից:

48. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը պատասխանատու կազմակերպիչը նորով փոխարինում է քննական կենտրոնի ղեկավարի թույլտվությամբ, ԳԹԿ ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը, խոտանված թեստի և պատասխանների ձևաթղթի վրա գրում՝ «խոտանված է»:

49. Կազմակերպիչները քննության ողջ ընթացքում պետք է մնան իրենց քննասենյակներում և ապահովեն սովորողների ինքնուրույն աշխատանքը:

50. Սովորողի կողմից կարգը խախտելու կամ դրան չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատու կազմակերպչին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացնել սովորողին, արձանագրել նախազգուշացումը, կրկնվելու դեպքում քննական կենտրոնի ղեկավարի, ԳԹԿ ներկայացուցչի հետ համաձայնեցնելով՝ հեռացնել քննասենյակից: Եթե սովորողն օգտվել է բջջային հեռախոսից, կապի այլ միջոցներից, արտագրել է, ապա քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը, կենտրոնի ղեկավարին տեղեկացնելով, հեռացնում է սովորողին՝ առանց նախազգուշացնելու: Հեռացվող սովորողից խմբի կազմակերպիչը վերցնում է քննական նյութերը, թեստերի և պատասխանների ձևաթղթի վրա գրում է՝ «Հեռացված է քննությունից» և արձանագրությունների մեջ գրանցում է հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը:

51. Քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի թույլտվությամբ) քննությունն ընդհատած սովորողից պատասխանատու կազմակերպիչը, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, վերցնում է քննական նյութերը, թեստի, պատասխանների ձևաթղթի վրա գրում է՝ «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով» և արձանագրությունների մեջ գրանցում քննությունն ընդհատած սովորողի անունը, ազգանունը:

52. Քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած սովորողը քննասենյակի պատասխանատու կազմակերպչի թույլտվությամբ մոտենում է իր խմբի կազմակերպչին, թեստը և պատասխանների ձևաթուղթը (եթե նախատեսված է) հանձնում է կազմակերպչին՝ ստորագրելով իր խմբի ցուցակի «հանձնեց» վանդակում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները (եթե պատասխանների ձևաթուղթը նախատեսված է):

53. Քննության ավարտից 30 րոպե առաջ պատասխանատու կազմակերպիչը սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթի վրա անցկացնելու մասին:

54. Քննության ավարտից 5 րոպե առաջ պատասխանատու կազմակերպիչը դադարեցնում է սովորողների՝ ժամանակից շուտ նյութերի հանձնումը և քննասենյակից դուրս գալը:

55. Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, մոտենալով սովորողին, համեմատում են թեստի համարը պատասխանների ձևաթղթում գրանցված համարի հետ, եթե նախատեսված է առանձին պատասխանների ձևաթուղթ, պատասխանների ձևաթուղթը դնում են թեստի մեջ և հավաքում նստարաններից: Այնուհետև կազմակերպիչները ընթերցում են թեստի վրա գրված նստարանի համարը, համապատասխան սովորողը մոտենում է խմբի կազմակերպչին, ստորագրում իր անվան դիմաց՝ սովորողների ցուցակում և դուրս գալիս քննասենյակից: Մյուս սովորողները մնում են իրենց տեղերում՝ մինչև իրենց հերթը հասնելը:

56. Քննության ավարտից հետո յուրաքանչյուր խմբի վերջին սովորողը ստորագրում է ցուցակ-արձանագրության համապատասխան տեղում, այնուհետև ստորագրում է նաև խմբի կազմակերպիչը: Կազմակերպիչը թեստերը, պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խոտանված), քննության ընթացքում հիվանդացած սովորողին տրված բժշկի տեղեկանքը, սովորողին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խոտանված թեստերի, պատասխանների ձևաթղթերի մասին արձանագրությունները, խմբի սովորողների ցուցակ-արձանագրությունը հրապարակայնորեն ծրարում է վերջին սովորողի ներկայությամբ:

57. Կազմակերպիչները քննասենյակում ստորագրում են նաև քննության անցկացման արձանագրությունում:

58. Սովորողի ցանկության դեպքում պատասխանատու կազմակերպիչը նրան տրամադրում է բողոք-դիմումի ձև: Բողոք-դիմումի կրկնօրինակի վրա կատարում է «Ընդունված է հանձնաժողովին ներկայացնելու համար» նշումը, ստորագրում և վերադարձնում է սովորողին:

59. Կազմակերպչին չի թույլատրվում՝

ա) քննության ընթացքում կարդալ թեստը, դուրս գալ քննասենյակից՝ առանց քննական կենտրոնի ղեկավարի թույլտվության,

բ) հուշել կամ քննարկել թեստի բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ սովորողների հարցերը,

գ) պատասխանների ձևաթղթերի վրա նշումներ կատարել կամ դրանք կպցնել ամրակներով, դակիչներով և այլն:

60. Քննության ժամանակի ավարտից հետո, ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը:

61. Պատասխանատու կազմակերպիչը քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե առկա են):

62. Պետական ավարտական և 9-րդ դասարանի «Բնագիտություն» առարկաների քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահպանվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում: Ավարտական կենտրոնացված քննությունների գրավոր աշխատանքները ԳԹԿ ներկայացուցիչների միջոցով ուղարկվում են ԳԹԿ՝ ստուգման նպատակով:

63. Ավարտական և պետական ավարտական քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14.00-ից՝ ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:

64. 9-րդ դասարանի «Բնագիտություն» առարկայի քննության ստուգող հանձնաժողովների անդամների 50 տոկոսը տվյալ առարկայի մասնագետներն են:

65. 12-րդ դասարաններում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

66. Կենտրոնացված ավարտական քննության առաջադրանքները ստուգվում են ԳԹԿ տնօրենի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից:

67. Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից հաստատված և հրապարակված «Ցուցումների» պահանջներին ու գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում:

68. Ավարտական և պետական ավարտական քննությունների գրավոր աշխատանքները ստուգվում են 20-միավորանոց համակարգով:

69. Քննական գնահատականների ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

70. Ավարտական և պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14.00-ին:

Կենտրոնացված ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են քննությունից հետո հինգերորդ օրը:

Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակները փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

71. Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

1) քննության անցկացման կարգի խախտման մասին,

2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:

72. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:

73. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են Հաստատության տնօրենին, բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Ավարտական և պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, ներկայացվում է դիմողին: Կենտրոնացված ավարտական քննության գնահատականների վերաբերյալ բողոքը Հաստատության տնօրենը այն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ:

Կենտրոնացված ավարտական քննության գնահատականի վերաբերյալ ԳԹԿ-ում դիմում-բողոքների քննարկումից հետո առարկայական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է:

74. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն և (կամ) դատարան:

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

# 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

# ՄԱՅՐԵՆԻ

*I. Թեստի կառուցվածքը և առաջադրանքների գնահատման չափանիշները*

Թեստը պարունակում է 15 առաջադրանք և բաղկացած է 2 մասից:

**1-ին մասը** պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի և 7 առաջադրանք՝ տեքստի բովանդակության վերաբերյալ: Առաջադրանքներից մեկը ընտրովի է, իսկ մնացածին պետք է պատասխանել բառով կամ նախադասությամբ: Այդ առաջադրանքներով ստուգվում են ընթերցանության զանազան ունակություններ՝ ուշադրություն, հետևություններ ու եզրակացություններ անելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևորելու հմտություններ: Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահանրամատչելիները՝ շուրջ 250 բառ:

**2-րդ մասը** պարունակում է 8 առաջադրանք (8-15-րդը), որոնցով ստուգվում են՝

1. բառի կազմության ճանաչում՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր),
2. բառի իմաստի իմացություն, հոմանիշների և հականիշների ճանաչում, բառի փոխաբերական իմաստով գործածություն, դարձվածքների ճանաչում,
3. ուղղագրական դժվարություն ունեցող բառում բաց թողած տառի տեղադրում,
4. գոյականի, դրա թվի և տեսակների՝ հատուկ, հասարակ, ածականի, թվականի, շաղկապի ճանաչում,
5. նախադասության անդամների ճանաչում՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, լրացումներին տրվող հարցերի իմացություն:

*II. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշներ*

Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորն է 15-ը: Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից սովորողի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է 10 բալանոց համակարգին:

| Միավորը | Գնահատականը | Միավորը | Գնահատականը |
|---|---|---|---|
| 0-1 | 1 | 8-9 | 6 |
| 2 | 2 | 10-11 | 7 |
| 3 | 3 | 12-13 | 8 |
| 4-5 | 4 | 14 | 9 |
| 6-7 | 5 | 15 | 10 |

*III. Աշխատանքի համար հատկացվող ժամանակ*

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

## Թեստի նմուշ

*1-7-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի*

Բարուրի մեջ ամուր փաթաթված մանկիկը թեև կուշտ էր, բայց ոչ մի կերպ չէր հանդարտվում: Մի ձայնի ճչում էր, անհանգիստ շարժումներ անում: Մոր փաղաքուշ հորդորները, խոսքերը, օրորոցայինը չէին օգնում: Ծնողները չէին հասկանում փոքրիկի աղիողորմ լացի պատճառը: Գուցե բարո՞ւրը բացեն: Արձակեցին կապանքները, և նույն րոպեին երեխան լռեց ու խաղաղ փակեց աչքերը: Մայրը հասկացավ. նրան կաշկանդել չէր կարելի:

Այդ ըմբոստ մանկիկը Լյուդվիգ վան Բեթհովենն էր՝ ապագա հանճարեղ կոմպոզիտորը: Անուրախ մանկություն է ունեցել մանչուկը: Հայրը սիրում էր ոգելից խմիչքներ: Նա երազում էր որդուն դարձնել մի նոր Մոցարտ: Յոթ տարեկան Լյուդվիգը, որ երբեմն ուզում էր վազվզել բակում, պահմտոցի, գնդակ խաղալ, հոր պահանջով գամված էր դաշնամուրին: Հայրը տեսնում էր տղայի բացառիկ ընդունակությունները և արգելում բացի երաժշտությունից որևէ այլ բանով զբաղվել:

Տասնմեկ տարեկան հասակում Բեթհովենն արդեն աշխատում էր եկեղեցում որպես երգեհոնահար, իսկ տասնչորս տարեկանում մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:

Շուտով Բեթհովենն այնքան է հռչակվում, որ շատ ազնվական տներից հրավերներ է ստանում՝ դառնալու սալոնային երաժիշտ: Բայց ըմբոստ ոգով ու անկախ բնավորությամբ Բեթհովենը հրաժարվում է՝ նախընտրելով մնալ աղքատ, բայց չապրել որևէ մեկի հրամանի ներքո, չկատարել պատվերներ:

Քսանյոթ տարեկանում Բեթհովենին մեծ դժբախտություն է պատահում. նա սկսում է խլանալ: Սակայն մեծ կոմպոզիտորն օժտված էր բացառիկ կամքով... «Ես կբռնեմ ճակատագրի կոկորդից, և նա չի կարող ինձ լիովին տապալել,- գրում էր բարեկամներին,- հաղթանակ՝ պայքարի միջոցով»:

...Խլությունը խորանում է: Բեթհովենի համար գնալով դժվարանում է մարդկանց հետ շփվելը, և միայն բնության գրկում է նրա հոգին լցվում երաժշտությամբ, ինչպես մանկության օրերին էր:

*1-4-րդ առաջադրանքներում գրել պատասխանը*

**1. Ի՞նչ են մտածում անել ծնողները բարուրի մեջ փաթաթված մանկիկին հանդարտեցնելու համար:**

Պատասխան՝ ________________________________________
________________________________________________:

**2. Ո՞վ էր այդ ըմբոստ մանկիկը:**

Պատասխան՝ ________________________________________
________________________________________________:

**3. Ինչպիսի՞ մանկություն է ունեցել նա:**

Պատասխան՝ ________________________________________
________________________________________________:

**4. Ի՞նչ էր երազում Բեթհովենի հայրը:**

Պատասխան՝ ________________________________________
________________________________________________:

**5. Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ.**

***Տասնմեկ տարեկանում որտե՞ղ էր աշխատում պատանի երաժիշտը:***

1) Մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:
2) Նա չէր աշխատում, տանը գամված էր միայն դաշնամուրին:
3) Ազնվական տներում աշխատում էր որպես սալոնային երաժիշտ:
4) Եկեղեցում աշխատում էր որպես երգեհոնահար:

*6-րդ, 7-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:*

**6. Քսանյոթ տարեկանում ի՞նչ դժբախտություն է պատահում Բեթհովենին:**

Պատասխան՝ ________________________________________:

**7. Մեծ դժբախտությունից հետո ինչպե՞ս էր Բեթհովենը լցվում երաժշտությամբ:**

Պատասխան՝ ________________________________________
________________________________________________:

*8-րդ, 9-րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը:*

**8.**

| *բառ* | *արմատ* | *ածանց* |
|---|---|---|
| ընդառաջ | | |

**9. Խմբավորել բառերը**

ձոր, անդնդախոր, թույլ, շառաչյուն, փոքրիկ, սարալանջ, գետակ, ձյուն, լայնատերև

| *պարզ* | *ածանցավոր* |
|---|---|
| | |

**10. Համապատասխանեցնել՝**

| Բառ | Հականիշ |
|---|---|
| 1) անկեղծ | Ա) գորշ |
| 2) մաքուր | Բ) որոտ |
| 3) աղմուկ | Գ) անդորր |
| | Դ) ազնիվ |
| | Ե) աղտոտ |
| | Զ) խարդախ |

**Պատասխան՝ 1-____, 2-____, 3 -____**

*11-13-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ:*

**11. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով:**

1) դալար կանաչ
2) լայնարձակ հովիտ
3) երփներանգ ծաղիկներ
4) անուշահոտ ջերմություն

**12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:**

1) ականջները սրել, 2) ուրիշին խաբել, 3) լեզուն կծել, 4) ճաշը համտեսել, 5) սիրտ անել, 6) աչքերը հառել, 7) գլուխ պահել

**13. Ո՞ր բառերում է գրվում -ղ-:**

1) ծնուն..., 2) բր...ոտ, 3) դա...ար, 4) փար...ամ, 5) սրըն...աց, 6) զար…

**14. Գրել պատասխանը.**

***Ո՞րն է տրված նախադասության ենթական:***

Ջյունը ծվարել էր ուղղաձիգ լեռնագագաթների ծերպերին:

**Պատասխան՝________________________________**

**15. Լրացնել աղյուսակը.**

***Տրված նախադասությունից դուրս գրել աղյուսակում նշված խոսքի մասերը:***

Արան քայլում էր ցողապատ խոտերի միջով, բազմերանգ ծաղիկներ հավաքում:

| գոյական | ածական |
|---|---|
| | |

## ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

# 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

### *ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ*

Թեստը բաղկացած է 18 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով առաջադրանքներ և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

**Ընտրովի պատասխան** են պահանջում 1-11-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

**Կարճ պատասխան** են պահանջում թեստի 12-16-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

**Ընդարձակ պատասխան** են պահանջում 17-րդ և 18-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: 17-րդ խնդիրը լուծելիս՝ գծագիրը, 18-րդ-ը լուծելիս համառոտագրությունը պարտադիր են: Այդ խնդիրներից յուրաքանչյուրին տրվում է առավելագույնը 2-ական միավոր: Գնահատման քայլը՝ 1 միավոր:

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը համապատասխանեցվում է 10-միավորանոց համակարգին:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Միավորը | Գնահատականը | Միավորը | Գնահատականը |
|---|---|---|---|
| 1 | 1 | 11-13 | 6 |
| 2-3 | 2 | 14-15 | 7 |
| 4-5 | 3 | 16-17 | 8 |
| 6-7 | 4 | 18-19 | 9 |
| 8-10 | 5 | 20 | 10 |

### Թեստի նմուշ

***1-11-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:***

**1.** Չորս հազար երեք հարյուր յոթ թվին համապատասխանող թիվն է՝

1) 4037 3) 4703
2) 4307 4) 4073

**2.** 360-ից 12-ով փոքր թիվն է՝

1) 480 3) 348
2) 372 4) 240

**3.** 768 թվի տասնյակների քանակն է՝

1) 6 3) 7
2) 76 4) 68

**4.** Աստղանիշի փոխարեն ո՞ր թվանշանի տեղադրման դեպքում ստացված թվերը դասավորված կլինեն նվազման կարգով. 8*6, 856, *75

1) 4 3) 7
2) 5 4) 9

**5.** 4 կգ 61 գ < 4 կգ * 1գ անհավասարության մեջ աստղանիշի թվանշանն է՝

1) 4 3) 6
2) 5 4) 7

**6.** 2 օր 15 ժամը ժամերով հավասար է՝

1) 215 ժ 3) 63 ժ
2) 39 ժ 4) 135 ժ

**7.** Քառակուսու պարագիծը 132 սմ է: Քառակուսու կողմի երկարությունն է՝

1) 33 սմ 3) 43 սմ
2) 66 սմ 4) 22 սմ

**8.** Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{3}{7}$ մասը ներկված է:



1) 2) 3) 4)

**9.** Ճիշտ պնդում է՝

1) նվազելին կստանաս, եթե հանելիից հանես տարբերությունը
2) գումարելիներից մեկը մեծացնելիս, իսկ մյուսը փոքրացնելիս միևնույն միավորով գումարը չի փոխվում
3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը հավասար է 0-ի
4) թիվը 10-ով բազմապատկելիս բավական է այդ թվի գրության վերջից երկու 0 ավելացնել

**10.** Կտրեցին 12 մ երկարությամբ մետաղալարի $\frac{1}{4}$ մասը: Քանի՞ մետր մետաղալար մնաց:

1) 3 մ 3) 9 մ
2) 6 մ 4) 48մ

**11.** 25 – 5 • 4 : 2 + 50 • 2 արտահայտության արժեքն է՝

1) 180 3) 115
2) 130 4) 140

***12-16 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը***

**12.** Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե AD = 155 մմ, AB = 23 մմ, BC = 82 մմ:




*Պատասխան՝* ____________________

**13.** Հաշվի՛ր ամենամեծ զույգ քառանիշ և ամենափոքր կենտ եռանիշ թվերի տարբերությունը:

*Պատասխան՝* ____________________

**14.** Դի՛ր թվաբանական գործողության նշանները ( +, -, •, : ) այնպես, որ վերականգնվի հավասարությունը:

94 □54 □6 = 85

**15.** Հաշվի՛ր 6532 - 5 • (1253 : 7 + 536) արտահայտության արժեքը:

*Պատասխան՝* ____________________

**16.** Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:

324, 524, 924, 1524, .... :

*Պատասխան՝* ____________________

***17-18-րդ առաջադրանքներից հետո նշված տեղում մանրամասն ու հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը:***

**17.** Ուղղանկյունաձև սավանի երկարությունը 220 սմ է, որը 60 սմ-ով մեծ է լայնությունից: Հաշվի՛ր այդ սավանի մակերեսը:

*Պատասխան՝* ____________________

**18.** Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 564 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա, նրանցից մեկի արագությունը 63 կմ/ժ էր: Ի՞նչ արագությամբ էր շարժվում երկրորդ ավտոմեքենան, եթե ավտոմեքենաները հանդիպեցին շարժվելուց 4 ժամ հետո:

*Պատասխան՝* ____________________

*Կրթվում ենք*



*Երգում, պարում ենք*



*Ուժեղանում ենք*



## *ԱՐՑԱԽՆ ԱՊՐՈՒՄ Է*

ԱՎԱՐՏԱԿԱՆ

# 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի «Հայոց լեզու» առարկայից ավարտական քննությունը անցկացվում է թեստով, որը պարունակում է 32 առաջադրանք:

1-12-րդ առաջադրանքները ընտրովի պատասխաններով են, կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ: Տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում աշակերտը նշում է ճիշտ պատասխանը «**X**» նշումով:

*Օրինակ*`



13-16-րդ առաջադրանքները կարճ պատասխանով են՝ տրված հարցի պատասխանի ինքնուրույն դուրսբերմամբ: Կարճ պատասխանով 16-րդ առաջադրանքն ունի 4 ենթահարց: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը և անցկացնում տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթ:

17-32-րդ առաջադրանքները տեքստի հիման վրա կազմված առաջադրանքներ են, որոնցից 17-20-րդ, 26-29-րդ առաջադրանքները կարճ պատասխանով են, 21-25-րդ և 30-32-րդ առաջադրանքները՝ ընտրովի:

Ձևաթղթում տրված են սխալ նշված պատասխաններն ուղղելու հնարավորություններ:

Թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն տրամադրված առանձին *պատասխանների ձևաթուղթը* (լրացված):

Յուրաքանչյուր առաջադրանքի և յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանին տրվում է 1-ական միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Թեստի առավելագույն միավորը 35 է, որը բերվում է գնահատման 20-միավորանոց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար հատկացվում է 120 րոպե:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Միավորներ | Գնահատական | Միավորներ | Գնահատական |
|---|---|---|---|
| 0 -1 | 1 | 15 - 16 - 17 | 11 |
| 2 | 2 | 18 - 19 - 20 | 12 |
| 3 | 3 | 21 - 22 | 13 |
| 4 | 4 | 23 - 24 | 14 |
| 5 | 5 | 25 - 26 | 15 |
| 6 | 6 | 27 - 28 | 16 |
| 7 - 8 | 7 | 29 - 30 | 17 |
| 9 - 10 | 8 | 31 - 32 | 18 |
| 11 - 12 | 9 | 33 - 34 | 19 |
| 13 -14 | 10 | 35 | 20 |

- **Ցուցում**

*Տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը լրացվում է միայն կապույտ գրիչով:*

## Թեստի նմուշ

*1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ*

**1. Գաղտնավանկ պարունակող բառերի շարքն է՝**

1) զբաղմունք, խնջույք, անդրադարձ
2) շրջադարձ, գլխարկ, ակնթարթ
3) նշաձող, խնկածաղիկ, դառնահամ
4) գրկաբաց, տպագիր, առընթեր

**2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է (փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝**

1) աման-րյա, երկ-րյակ, ան-րակ (**օ** կամ **ո**)
2) փամ-ուշտ, ս-րթնել, ճամ-րուկ (**պ** կամ **փ**)
3) մա-թանք, ներգա-թ, նա-ճիր (**ղ** կամ **խ**)
4) բա-ադ, սովա-ուկ, մի-իոն (**լ** կամ **լլ**)

**3. Բոլոր բառերի բաղադրիչները անջատ գրվող շարքն է՝**

1) մուգ (կապույտ), դռնե (դուռ), ի (սրտե)
2) ամենա (բարձր), ծովից (ծով), դեմ (դիմաց)
3) դեմ (առնել), ուս (ուսի), մեկ (երկրորդ)
4) անթիվ(անհամար), հարյուր (մեկ), մեջ (ընկնել)

**4. Դարձվածք կա՝**

1) Հորովելը գեղջուկի
Դաշտերում է հնչում…
2) Արևակող լեռան լանջին
Նուռն է ճաքել քաղցրությունից:
3) Ամպը լեզուն կուլ է տվել,
Հնար չունի որոտալու:
4) Պատահում է՝ սիրտդ լցվում
Ու չի լալիս ժամանակին…

**հատվածում**

**5. Բարդ բառերի շարքն է՝**

1) փառահեղ, ուղտապան, պարզորոշ
2) խոտհարք, հովհար, օրհներգ
3) ճանապարհ, հրթիռ, շարժառիթ
4) մեղմօրոր, մարդամոտ, հերարձակ

**6. Հոմանիշ բառերի շարքն է՝**

1) շողոքորթ, քծնող, շատախոս
2) սերել, ծագել, առաջանալ
3) շավիղ, կածան, թավուտ
4) հակիրճ, համառոտ, թյուր

**7. Շարքի բոլոր բառերը ենթարկվում են *ի* հոլովման՝**

1) կին, դիմում, աղախին
2) տղա, երեխա, վայրկյան
3) տղամարդ, Անի, եղանակ
4) վերարկու, աղջիկ, ածխաթթու

**8. Շարքի բոլոր բառերը դերանուններ են՝**

1) ուրիշ, սրանք, բոլոր
2) դեմուդեմ, նույնքան, ամբողջ
3) այսչափ, ամենուր, միևնույն
4) միմյանց, ոմն, որպեսզի

**9.Ածականների շարքն է՝**

1) պատահական, ոսկե, հիմա
2) լռակյաց, ալյուրոտ, մաքուր
3) այսպիսի, ձմեռային, ծեր
4) սարսափելի, դողացող, իմաստալից

**10. Նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝**

*Շարունակելով ճանապարհը՝ հասանք մի հեղեղատի,*

1) քանի որ խորհուրդ տվեցի ընկերոջս սպասել, մինչև հեղեղը դադարի:
2) որոնց բարձունքից լսվում էր բուի կռինչը:
3) թեկուզ և հանգստի համար հարմար պահ չէին ընտրել:
4) որից պետք է անցնեինք դիմացի կիրճը:

**11. Անձնավորում պարունակող հատվածն է՝**

1) Կապույտ մրրիկ է պայթել,
Կապույտ մշուշ է…
Ուռին ուզում է փախչել,
Բայց արդեն ուշ է:
2) Հավքը բախվեց ուռենուն…
Ոստերից նրա,
Մոլորակներ թափվեցին
Քարերի վրա:
3) Սարի լանջին՝ ժայռի տակ,
Ջուր էր բխում սառնորակ…
4) Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը
Մեն-մենակ քարել է:

**12. Կետադրական սխալ կա՝**

1) Պատահել էր՝ կայծակը խփել էր ոչխարի հոտին, և հոտի կեսը այրվել էր:
2) Խստաշունչ ջրածտերը՝ քարից քար թռչելով, որսում էին մժեղներ:
3) Վերևում՝ բլրակի գլխին, կանգնել էր հովիվը՝ մահակին հենված:
4) Ներքևը, Բասուտա գետի մյուս ափին, թառել էին մի քանի տներ:

**նախադասության մեջ**

*13-16 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը*

**13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:**
**Գրի՛ր միայն նախադասությունների համարները:**

1. Կամ մի թեթև հովից ծառերի տերևները շարժվեցին:
2. Մեկ էլ տեսար մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների բզզոցի ուժգնությամբ:
3. Օրվա այն պահերին, երբ ամառային արևը կանգնում էր ուղիղ զենիթում, մի թանձր լռություն էր խտանում շուրջը:
4. Եվ տարածվեց տերևների ձայնը ծովի ալեկոծության պես ալիք-ալիք թավալումով:

Պատասխան՝ ___________________________________

**14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:**

*Թեև վստահ էր, որ դուռը փակել է սողնակով, սակայն անհանգստության զգացմունք ունեցավ, հետ դարձավ՝կրկին ստուգելու՝ փակվա՞ծ է, արդյոք:*

**Պատասխան՝** *սխալ է՝* ___________________________
*պետք է լինի՝* ___________________________

**15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:**

Թույլ մի՛ տուր, որ նախատեն քեզ ծուլության համար, ծիծաղեն քո վրա, որ չիրականացրիր քո վաղեմի երազանքը:

**Պատասխան՝** *սխալ է՝* ___________________________
*պետք է լինի՝* ___________________________

**16. Տրված բառերը տեղադրե՛լ բաց թողած տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:**

Տղան տեղից ………………….. և վազեց գլորվող ……………… հետևից, վերցրեց դրանք, ապա երկու տուփը ձեռքին՝ եկավ ու ……………………… փաթաթվեց …………………… փեշերին:

**(լաց լինել, մայր, ցատկել, տուփ)**

Պատասխան՝ 1.------------------------------------------
2.------------------------------------------
3.------------------------------------------
4.------------------------------------------

***17-32-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի***
***Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները***

**I**

1. Երկրի մթնոլորտի վերին նոսր շերտերում՝ 80-1000 կմ բարձրության վրա երբեմն տեղի է ունենում բնության զարմանահրաշ երևույթներից մեկը՝ բևեռափայլը: 2. Դա մի յուրատեսակ լուսարձակում է, որ դիտվում է հիմնականում Երկրի բևեռային շրջաններում, հազվադեպ՝ նաև միջին լայնություններում: 3. Հայաստանում 1098-1100 թվականներին դիտվել է չորս բևեռափայլ: 4. Բևեռափայլը անչափ գրավիչ տեսարան է. երկնքի ամբողջ հյուսիսային կողմը լուսավորվում է կարմիր ու կանաչ երկու հսկայական, շողշողուն կամարներով: 5. Անընդհատ ձևափոխվելով ու երփներանգվելով՝ կամարները մեկ անհետանում են, մեկ նորից հայտնվում: 6. Հանկարծակի մութ երկինքը ասես նետահարում են պայծառ ճառագայթները, իսկ ժամանակ առ ժամանակ օդում կախվում են կարմիր ծոպերով զմրուխտե «վարագույրներ»: 7. Պայծառ, հիասքանչ բևեռափայլը երկնքում փողփողում է մի քանի ժամ անընդհատ:

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-9

II

1. Բևեռափայլերը Արեգակի ակտիվության հետևանք են: 2. Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն և արտանետում էլեկտրականությամբ լիցքավորված նյութի մանրագույն մասնիկների հոսքեր: 3. Այս երևույթը կոչվում է արեգակնային քամի: 4. Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի մոլեկուլներին, և սրանք սկսում են փայլփլել տարբեր գույներով՝ դեղին, կանաչ, կապույտ, կարմիր, մանուշակագույն, նարնջագույն: 5. Բևեռափայլի աղեղները երբեմն անցնում են 5000 կմ-ից: 6. Երկրից բացի միակ այլ մոլորակը, որտեղ մինչ օրս նկատվել են բևեռափայլեր, Սատուրնն է:

*17-20-րդ առաջադրանքներում գրել պատասխանը*

**17. 80 թիվը գրի՛ր տառերով:**

*Պատասխան՝* ____________________

**18. I հատվածից դու՛րս գրիր փոխաբերական իմաստով գործածված մեկ բառ:**

*Պատասխան՝* ____________________

**19. Գրի՛ր մեկ բան, ինչին կարող են նմանվել բևեռափայլերը:**

*Պատասխան՝* ____________________

**20. I հատվածից դու՛րս գրիր մեկ բառ, որում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

*Պատասխան՝* ____________________

*21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ*

**21. Գերադրական աստիճանով դրված ածականն է՝**

1) հիասքանչ
2) վիթխարի
3) մանրագույն
4) նարնջագույն

**22. I հատվածում *կապ* խոսքի մաս պարունակող նախադասությունն է՝**

1) 2
2) 3
3) 4
4) 6

**23. I հատվածում վերաբերական պարունակող նախադասությունն է՝**

1) 3
2) 4
3) 5
4) 6

**24. I հատվածում անորոշ դերբայ պարունակող նախադասությունն է՝**

1) 1
2) 3
3) 5
4) 6

**25. Բաղադրյալ ստորոգյալ չկա՝**

1) I. 4
2) I. 5
3) II. 1
4) II. 6

*26 -29 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը*

**26. Գրի՛ր I հատվածից այն բարդ նախադասության համարը, որը կապակցվել է դերանունով:**

*Պատասխան՝* ________________________

**27. II հատվածից դո՛ւրս գրիր բազմապատկական բայը:**

*Պատասխան՝* ________________________

**28. I. 1. նախադասությունից դո՛ւրս գրիր մակբայը:**

*Պատասխան՝* ________________________

**29. Գրի՛ր I հատվածի այն նախադասության համարը, որում ստորոգյալի լրիվ զեղչում կա:**

*Պատասխան՝* ________________________

*30-32-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

**30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝**

1) Բևեռափայլի կամարները կարող են ձգվել հազարավոր կիլոմետրեր:
2) Պատահել է, որ Հայաստանի տարածքում 2 տարում դիտվել է 4 բևեռափայլ:
3) Տիեզերքում միակ մոլորակները, որոնց վրա կարող են բևեռափայլեր տեղի ունենալ, Երկիրն ու Սատուրնն են:
4) Բևեռափայլերը կապված են Արեգակի ակտիվության հետ:

**31. Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն:

1) **Արեգակի** - հատուկ անուն
2) **շիկացած** - ածական
3) **ճառագայթում է** - բայ, սահմանական եղանակ
4) **ջերմություն** - գոյական, անորոշ առում

**32. Տրված նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝**

Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի ***մոլեկուլներին***:

1) տեղի պարագա
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) ձևի պարագա

# 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից ավարտական քննությունը անցկացվում է թեստով, որը պարունակում է 32 առաջադրանք:

1-10, 13, 14, 22, 23-րդ առաջադրանքները ընտրովի պատասխաններով են, կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ: Տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում աշակերտը նշում է ճիշտ պատասխանը **«X»** նշումով:

*Օրինակ՝*




11, 12, 15-21, 24-29-րդ առաջադրանքները կարճ պատասխան են պահանջում: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը, առանց չափման միավորի անցկացնում տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթ:

30-32-րդ առաջադրանքներն ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված պետք է ներկայացվի տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում:

Ձևաթղթում տրված են սխալ նշված պատասխաններն ուղղելու հնարավորություններ:

1-29-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

30-32-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Գնահատման քայլը՝ 1 միավոր:

Թեստի առավելագույն միավորը 35 է, որը բերվում է գնահատման 20 միավորանոց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը (լրացված):

Թեստ-գրքույկի ազատ մասերում կարող եք սևագրել:

Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար հատկացվում է 120 րոպե:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Միավորներ | Գնահատական | Միավորներ | Գնահատական |
|---|---|---|---|
| 0 -1 | 1 | 15 - 16 - 17 | 11 |
| 2 | 2 | 18 - 19 - 20 | 12 |
| 3 | 3 | 21 - 22 | 13 |
| 4 | 4 | 23 - 24 | 14 |
| 5 | 5 | 25 - 26 | 15 |
| 6 | 6 | 27 - 28 | 16 |
| 7 - 8 | 7 | 29 - 30 | 17 |
| 9 - 10 | 8 | 31 - 32 | 18 |
| 11 - 12 | 9 | 33 - 34 | 19 |
| 13 -14 | 10 | 35 | 20 |

***Ցուցումներ***

- *Քննության ժամանակ աշակերտը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ, քանոն, կարկին:*
- *Տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը լրացվում է միայն կապույտ գրիչով:*

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ-9

## Թեստի նմուշ

*1-10-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի*

*մեկ կամ մի քանի տարբերակ*

1. 11 և 15 թվերի քառակուսիների գումարն է՝
   1) 136  2) 576  3)236  4)346

2. Տրված թվանշաններից ընտրել այն թվանշանը, որը տեղադրելով 376*4 հնգանիշ թվի աստղանիշի փոխարեն, բաժանվի 3-ի
   1) 1  2) 2  3)3  4)4

3. Մեկ ցենտները կազմում է մեկ տոննայի
   1) 100  2) 10  3)1  4)$\frac{1}{100}$

   տոկոսը

4. 108 և 72 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարն է՝
   1) 216  2) 72  3)36  4)12

5. $2x^3y - 3x^2y^2 + x^3y^2 - 5$ բազմանդամի աստիճանն է
   1) 4  2) 3  3)5  4) 2

6. $x^2 - 7x - 2 = 0$ հավասարման արմատների գումարն է՝
   1) 7  2) -7  3)2  4)-2

7. $y = 3x + 1$ ֆունկցիայի գրաֆիկի աբցիսների առանցքի հատման կետն է՝
   1)$(\frac{1}{3}; 0)$  2) (1;0)  3) $(-\frac{1}{3}; 0)$  4) (0;3)

8. Զամբյուղում կա 2 կանաչև 3 կարմիր խնձոր: Զամբյուղից կանաչ խնձոր հանելու հավանականությունն է՝
   1) 1  2) $\frac{2}{3}$  3)$\frac{3}{5}$  4) $\frac{2}{5}$

9. $y = \frac{2x-6}{2x+1}$ ֆունկցիայի զրոներն են՝
   1) $-0.5$ *և3*  2) 3  3)$-0.5$  4) $-3$

10. $12x + 15 = 3(3x - 1)$ հավասարման լուծումն է
    1) 6  2) -6  3)$-3$  4) $\frac{4}{7}$

*11-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները*
*գրել ծնաթղթի համապատասխան տեղում*

11. Գտնել AB հատվածի միջնակետի կոորդինատների արտադրյալը, եթե A և B կետերի կոորդինատներն են ՝ A(-2;4), B (-6;7)

Պատասխան__________________

12. Գտնել $\overrightarrow{AB}$ վեկտորի երկարությունը, եթե A և B կետերի կոորդինատներն են ՝A(-2;4), B (-6;7)

Պատասխան__________________

*13-14-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը*
*կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

13. 5;8; ... թվաբանական պրոգրեսիայի 8 անդամների գումարն է՝
    1) 248  2) 124  3)104  4) 136

14. 4;-1; ...անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարն է՝
    1) 3  2) $\frac{1}{3}$  3)3.2  4) $4\frac{1}{4}$

*15-21-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները գրել*
*ծնաթղթի համապատասխան տեղում*

15. Հաշվել$\left(\frac{5}{9} - 1\frac{1}{6} \cdot 0{,}5\right) : \frac{5}{9} + |-0.25|$

Պատասխան__________________

16. Առաջին ապրանքիգինը 250 դրամ է, երկրորդ ապրանքը առաջինից թանկ է 20%-ով: Գտնել երկրորդ ապրանքի գինը:

Պատասխան__________________

17. Խաղողը չորացնելիս կորցնում է իր զանգվածի 75%-ը: Որքա՞ն խաղող պետք է վերցնե լորպեսզի ստացվի 3 կգ չորացրած խաղող:

Պատասխան__________________

18. Գտնել $\sqrt{8+\sqrt{15}} \cdot \sqrt{8-\sqrt{15}}$ արտահայտության արժեքը

Պատասխան__________________

19. Գտնել $(\sqrt{a^5b^3} - \sqrt{a^3b^5}) : \sqrt{a^3b^3}$ արտահայտության արժեքը , եթե a=4, b=1

Պատասխան__________________

20. Գտնել $\frac{x+3}{x-1} \geq 0$ անհավասարման լուծումների բազմությունը:

Պատասխան__________________

21. Գտնել $-x^2+3x+10>0$ անհավասարման լուծումը

Պատասխան__________________

*22-23-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը*
*կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ*

22. $y = |x-3| + 2$ ֆունկցիայի վերաբերյալ ճիշտ պնդում է՝
    1) ֆունկցիայի գրաֆիկը աբցիսների առանցքը հատում է ճիշտ երկու կետում
    2) ֆունկցիաների գրաֆիկի համաչափության առանցքը x=3 ուղիղն է
    3) ֆունկցիան նվազող է
    4) ֆունկցիայի առանցքների բազմությունը $[2, +\infty)$ միջակայքն է

23. $\begin{cases} x^2 - 5x + 6 \leq 0 \\ x^2 + x - 2 \geq 0 \end{cases}$ անհավասարումների համակարգի լուծումն է՝
    1)$(-\infty; 3]$  2)$[-2; 3]$  3)$[2; 3]$  4) $\emptyset$

*24-29-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները գրել ծնաթղթի համապատասխան տեղում*

24. Ուղղանկյունանիստի հիմքը 4սմ կողմով քառակուսի է, իսկ կողմնային նիստի անկյունագիծը 5սմ է: Գտնել ուղղանկյունանիստի բարձրությունը

Պատասխան__________________

25. Ուղղանկյունանիստի հիմքը 6սմ և 9սմ կողմերով ուղղանկյունի է, իսկ կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է 150սմ$^2$: Գտնել ուղղանկյունանիստի ծավալը

Պատասխան__________________

26. Ջերմանավը 10 ժամում կարող է անցնել 110կմ հոսանքի ուղղությամբ: Հոսանքի արագությունն 2կմ/ժ է: Գտնել ջերմանավի սեփական արագությունը:

Պատասխան__________________

27. Քաղաքից բեռնատար մեքենան շարժվեց 60կմ/ժ արագությամբ: 2ժամ 30րոպեից հետո նույն քաղաքից նրա ետևից շարժվեց մարդատար մեքենան ՝ 80կմ/ժ արագությամբ: Քանի ժամ հետո մարդատար մեքենան կհասնի բեռնատարին:

Պատասխան__________________

28. Շեղանկյան անկյունագծերը 5սմ և 12 սմ են: Գտնել շեղանկյան մակերեսը:

Պատասխան__________________

29. Գտնել զուգահեռագծի բութանկյունը եթե նրա մակերեսը 40սմ $^2$ է, իսկ կողմերը 10սմ և 8սմ են:

Պատասխան__________________

*30-32-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասնորեն և հիմնավորված ներկայացնել առաջադրանքից հետո նշված տեղում*

30. a-ի ի՞նչ արժեքների դեպքում $x^2-(a-1)x+1=0$ հավասարումն ունի զոնե մեկ արմատ:

Պատասխան__________________

31. Հավասարասրուն սեղանի հիմքերը հավասար են 2սմ և 6սմ, իսկ բութանկյունը $120^0$ է: Գտնել սեղանի մակերեսը:

Պատասխան__________________

32. Առաջին խողովակը ավազանը կարող է լցնել երկրորդից 12 ժամով ուշ, իսկ միասին կարող են լցնել 8 ժամում: Միայն առաջին խողովակով քանի՞ ժամում կլցվի ավազանը:

Պատասխան__________________

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*9-րդ դասարանի բանավոր քննությունների հարցատոմսերի նմուշները տեղադրված են ՀՀ ԳԹԿ-ի atc.am կայքէջում:*

ՕՐԱԽՆԴԻՐ

# ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ՄԱՐՏՈՒՆԱԿ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ



*Արցախում սպորտով զբաղվողների եւ տարբեր մարտարվեստներով պարապողների թիվը գերազանցում է մի քանի հազարը: Սա զարմանալի չէ, քանի որ Արցախը սպորտային երկիր է: Դրա մասին գիտենք ոչ միայն մենք՝ արցախցիներս, այլեւ տեղյակ են ամբողջ աշխարհում՝ շնորհիվ միջազգային, համաշխարհային մրցահարթակներում մեր մարզիկների գրանցած հաջողությունների, փառավոր հաղթանակների: Սակայն եթե արտերկրում մեր մարզիկների հաջողությամբ պայմանավորված՝ Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու ռազմավարությունը յուր ժամանակ տալիս էր դրական արդյունք, ապա նույնը չենք կարող իրականացնել հիմա՝ Արցախի շուրջը եւ ներսում ծառացած բարդ ու վտանգավոր խնդիրների չլուծված լինելու պարագայում: Արդի մարտահրավերներին պետք է տալ ժամանակահունչ պատասխաններ՝ օգտագործելով մեր մարզական հզոր ներուժը: Եթե մի ժամանակ մարզիկի առջեւ խնդիր էր դրված՝ լավ մարզվել, մասնակցել տարբեր մրցաշարերի ու առաջնությունների, հաղթել եւ այդպիսով Արցախը ճանաչելի դարձնել աշխարհին՝ բարձր պահելով երկրի պատիվը, ապա հիմա խնդիրն այլ է. մարզվել, կոփվել, լինել հնարավորինս մարտունակ, կարողանալ ողջ մնալ երկրի վրա պատուհասված ցանկացած արհավիրքի դեպքում, ճիշտ օգտագործել ներուժը, լինել ազգային արժեքների ու գաղափարախոսության կրողը՝ այդպիսով պաշտպանելով ու պահպանելով հայկական Արցախը:*

*Մարտունակ եւ ոգով ուժեղ բնակչություն ձեւավորելու համար աշխարհում գոյություն ունեն տարբեր ուսումնական համակարգեր ու հայեցակարգեր, սակայն Արցախի համար ամենապահանջվածը թերեւս ողջ մնալու արվեստն է (կրճատ՝ «ՈՄԱ»):*

*Հակիրճ տեղեկություն. «ՈՄԱ»-ն ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպություն է, որի նպատակն է Հայաստանում եւ Արցախում ստեղծել ավելի մարտունակ բնակչություն: Հիմնադրվել է 2014թ.: Նախագահը առաջին հետախուզադիվերսիոն խմբի հիմնադիր Վովա Վարդանովն է: «ՈՄԱ» կազմակերպության առաջնային գաղափարն այն է, որ Հայաստանից ու Սփյուռքից պահեստազորի, նորակոչիկների ու կամավորների պատրաստումը կօգնի ստեղծել ավելի հզոր պետություն ու կդառնա իրական պահեստային բանակ: Կազմակերպությունն իրականացնում է դասընթացներ 16 տարեկանից բարձր անձանց համար, որոնք ընդգրկում են մի շարք ոլորտներ. հրազենային պատրաստություն, նետաձգություն, ավտոնոմ գոյատեւում, ձեռնամարտ՝ վինգչուն, դանակի սպորտային նետում, ժայռամագլցում, կիրառական կենսաբանություն, բուժպատրաստություն, հոգեբանություն, քարտեզագիտություն, ռազմապար: Կազմակերպությունը չունի պետական աջակցություն, գործում է Հայաստանի եւ Սփյուռքի քաղաքացիների ֆինանսական աջակցության շնորհիվ: Նպատակներից է՝ երկրի ողջ տարածքով ունենալ ապաստարաններ ու թաքնված կրակակետեր, խթանել ռազմական արդյունաբերությունն ու բանակի տեխնոլոգիականությունը, դպրոցականներին նախապատրաստել զինվորական ծառայության, ապահովել աղջիկների ռազմական կրթությունը: 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում «ՈՄԱ»-ն ակտիվ գործունեություն է ծավալել ոչ միայն բուն մարտական գործողություններին մասնակցելու, այլեւ կամավորական խմբերին նախապատրաստելու միջոցով: Ռազմաճակատ մեկնելուց առաջ հարյուրավոր կամավորներ կազմակերպության կողմից զինվորական պատրաստություն են անցել՝ սովորելով ողջ մնալ եւ գոյատեւել պատերազմական պայմաններում, ցուցաբերել առաջին բուժօգնություն, ուսումնասիրել են նաեւ լեռնագնացություն եւ հոգեբանություն:*

*Արցախում նման ծրագիր ներդնելու՝ կարեւորագույն նշանակություն ունեցող հարցի շուրջ զրուցեցինք Արցախի վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայի նախագահ, ՄՊՄԴ վինգչունի մարզիչ ՍԱՅԱԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ հետ:*

***- Սայա՛թ, Ձեր կարծիքով, ինչո՞ւ է ողջ մնալու արվեստի ձեռնամարտի տեխնիկան հիմնված վինգչունի բազայի վրա եւ ինչո՞ւ է «ՈՄԱ» կազմակերպությունը համարվում լավագույնը մարտունակ բնակչություն ձեւավորելու համար:***

- «ՈՄԱ» կազմակերպության դասընթացների հիմքում վինգչուն մարտարվեստն է, քանի որ դրա հիմնադիրը՝ Վովա Վարդանովը, նախկինում ՀՀ վինգչունի ֆեդերացիայի անդամ էր, մի քանի տարի մարզվել է, եւ վինգչուն մարտարվեստը որպես ինքնապաշտպանություն օգտագործելու շատ գիտելիքներ ունի, ինչն էլ կիրառել ու դարձրել է այդ կազմակերպության ձեռնամարտի հիմքը: Ինքս «ՈՄԱ» կազմակերպության անդամ չեմ, հնարավոր է, որ լրիվությամբ չկարողանամ մեկնաբանել դրա հետ կապված բոլոր հարցերը, բայց որքանով հետեւել եմ, տեղյակ եմ, որ անվանումն ինքնին հուշում է, որ տարբեր անձանց պատրաստում են արտակարգ իրավիճակներում ավելի հմուտ, խելացի ու գրագետ գործել, որի շնորհիվ էլ մարդը հնարավորություն է ստանում այդ իրավիճակից ողջ դուրս գալ՝ ի տարբերություն նրանց, ովքեր կարող են սխալ գործելու արդյունքում կամ սխալ պլաններ մշակելու պատճառով վիրավորվել կամ ողջ չմնալ: Հայաստանում ամենազարգացած, կատարելագործված եւ միակ կազմակերպությունը «ՈՄԱ»-ն է, որն իրագործում է նման ծրագիր, բայց Հայաստանից դուրս աշխարհում կան այդպիսի շատ կազմակերպություններ, որոնց մասին մենք կարող է տեղյակ էլ չենք: Կան մարտարվեստի կամ ինքնապաշտպանության ֆեդերացիաներ, որոնք իրենց գործունեությանը զուգահեռ նաեւ անց են կացնում հրաձգության կամ առաջին բուժօգնության դասեր, բայց այնքան էլ կատարելագործված չեն դրանում, որովհետեւ իրենց գլխավոր նպատակը միայն մարտարվեստներն են, իսկ «ՈՄԱ»-ն հենց կենտրոնացած է մարդկանց ողջ մնալու համար տեխնիկա սովորեցնելու վրա: Հնարավոր է, որ դրա համար էլ համարվում է լավագույնը:

***- Ինքներդ լինելով վինգչունի մարզիչ՝՝ համոզվելու առիթներ ունեցե՞լ եք, որ վինգչունի տեխնիկան, իրոք, ամենաարդյունավետն է, եթե ստիպված ես ձեռնամարտի դիմել ողջ մնալու համար:***

- Այո, իմ կյանքում եղել է այդպիսի դեպք, երբ կարիք եղավ օգտագործելու վինգչունի հնարքները: Դրանով ավելի շատ համոզվեցի, որ իսկապես վինգչունը շատ արդյունավետ է, շատ հարմար է առօրյա կյանքում ինքնապաշտպանվելու եւ ընդհանրապես ողջ մնալու համար: Դա միայն իմ կարծիքը չէ: Բոլոր զարգացած պետությունների հիմնական ու կարեւոր ուժային կառույցների (հատուկ ծառայություններ, հատուկ ջոկատայիններ, նախագահական թիկնապահական ստորաբաժանումներ կամ հետախուզական ստորաբաժանումներ) աշխատողների նախապատրաստության հիմքում վինգչուն մարտարվեստն է: Երկար տարիներ տվյալ ծառայությունների կողմից մշակվել ու քննարկվել է, քննվել ու որոշվել է, որ պետք է լինի վինգչունը: 21-րդ դարում աշխարհի ամենազարգացած հետախուզական ստորաբաժանումներից մեկը Իսրայելի հետախուզական «Նատիվ» կազմակերպությունն է, որի գործակալները պարապում են վինգչուն: Մեծ Բրիտանիայի MI-6 կոչվող հետախուզական գաղտնի ծառայության աշխատակիցները հիմնականում պարապում են վինգչուն, ռուսական ФСБ-ի մեջ կա առանձին հատուկ բաժին, որի համագործակիցները նույնպես պարապում են վինգչուն, ԱՄՆ նախագահի թիկնապահական գնդի մեջ կա վինգչուն պարապող 200 հոգանոց գաղտնի ստորաբաժանում: Գերմանիայում, Չինաստանում, Վիետնամում եւ ուրիշ տեղեր կարեւոր ստորաբաժանումները մարզվում են վինգչունով: Սա փաստում է, որ վինգչունը իրականում շատ արդյունավետ է ողջ մնալու համար, եթե մարտական գործողությունների ժամանակ ստիպված ես ձեռնամարտի բռնվել:

***- Ըստ Ձեզ՝ Արցախում պե՞տք է մտցնել «ՈՄԱ»-ի ուսումնական դասընթացները մարզիկների կամ առհասարակ բոլոր քաղաքացիների ինքնապաշտպանությունն ու անվտանգությունը լավ կազմակերպելու գործընթացի մեջ:***

- Այո, շատ անհրաժեշտ է Արցախում նման գաղափարներով ու նպատակներով որեւէ կազմակերպություն ստեղծելը, եթե նույնիսկ «ՈՄԱ» չլինի, պարզապես ՀՀ-ում դա է ամենազարգացածը. կարելի է փորձն օգտագործել: Ներկայում Արցախում ընդհանրապես այդպիսի կազմակերպություն չկա, ոչ էլ մասնագետ կա: Աշխարհի ամենակարեւոր տեղերից մեկն է Արցախը, որտեղ որ պետք է լինեն այդպիսի կազմակերպություններ, իրականացվեն ծրագրեր, հատկապես բլոկադային շրջանում, որպեսզի բնակչության առնվազն 50 տոկոսը՝ տղամարդիկ թե կանայք, տիրապետի ողջ մնալու հմտություններին:

***- Այլ մարզաձեւով կամ մարտարվեստով պարապած լինելը կարո՞ղ է խթանել «ՈՄԱ»-ն ավելի հեշտ յուրացնելուն, թե՞ հակառակը՝ կարող է խանգարել:***

- Իհարկե կխթանի. եթե մարդ պարապած է լինում որեւէ մարզաձեւով կամ մարտարվեստով, նա ավելի հեշտ կարող է յուրացնել ողջ մնալու արվեստը: Հետեւություններ անելով դիտարկումներից՝ կարող եմ ասել, որ դասընթացների ժամանակ ավելի շատ ուշադրություն են դարձնում հրազենային զենքով կրակ վարելու կարողություններ, առաջին բուժօգնություն եւ լեռնագնացության կանոններ, անտառում գոյատեւելու տեխնիկաներ սովորեցնելուն: Անկախ նրանից, թե ինչ է պարապել տվյալ մարզիկը կամ քաղաքացին, եթե ֆիզիկապես պատրաստ է, պարզ է, որ ավելի հեշտ կարող է յուրացնել ողջ մնալու արվեստը:

***- Ի՞նչ առավելություններ կունենան «ՈՄԱ» պարապած Արցախի բնակիչները երկրում ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ:***

- Ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ ավելի լավ իրեն կդրսեւորի բնակչությունը, ավելի քիչ զոհեր կունենանք, ավելի քիչ վնասներ կկրենք, քան թե անպատրաստ լինելու դեպքում: Պարապելու ընթացքում ձեռք բերվող հմտությունների հետ մեկտեղ ոգին ուժեղանում է, մարդիկ դառնում են ինքնավստահ, գործում են հավասարակշռված, առանց խուճապի, իսկ դա արդեն ավելի մեծ արդյունք կտա՝ ավելի քիչ զոհերով: Դրա համար էլ Արցախում դա անհրաժեշտ է ներդնել, եւ ընդհանրապես բնակչության պատրաստությանը պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել: Անկախ սեռից ու տարիքից՝ բոլորը պետք է պատրաստ լինեն մարտական գործողությունների ժամանակ ճիշտ քայլեր կատարելուն: Պետք է պատրաստել ու հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան մարտ վարել եւ հույսը չդնեն միայն բանակի կամ ծառայությունների վրա, կարողանան զենք բռնել ու ճիշտ օգտագործել, իսկ «ՈՄԱ»-ի նպատակը հենց դա է:

***- Սայա՛թ, ի՞նչ պետք է անել, որտեղի՞ց սկսել այդ կարգի գործառույթ իրականացնող կազմակերպություն Արցախում ունենալու գործընթացը:***

- Նման ծրագրի իրագործումն ու մասսայականացումն Արցախում նպատակային կլիներ կազմակերպվեր պետական աջակցությամբ: Տեղին եմ համարում, որ Արցախում գործող տարբեր մարտարվեստների մարզիչները վերապատրաստման դասընթացների մասնակցեն եւ «ՈՄԱ»-ի մասնաճյուղ բացելով Արցախում՝ ուժեղ թափով սկսեն մարտունակ բնակչություն պատրաստելու գործընթացը: Պետական աջակցությամբ չստացվելու դեպքում, կարծում եմ, ճիշտ կլինի գտնել հովանավորներ եւ ներկայացնելով ծրագիրն ու դրա հետ կապված հեռանկարները՝ դիմել օգնության: Ավելի լավ կլինի մարզիչներով միավորվենք Արցախում նման գործունեություն ծավալելու գաղափարի շուրջ, յուրաքանչյուրս ներդնենք մեր գիտելիքները, փորձն ու ուժը եւ ստեղծենք հզոր կազմակերպություն: Նշեմ, որ մեր ֆեդերացիան եւ անձամբ ես որպես մարզիչ պատրաստ ենք տրամադրել համապատասխան ռեսուրսներ Արցախի բնակչությունը մարտունակ եւ ավելի ուժեղ դարձնելու գործընթացի համար:

**Սոնյա ԱՎԱԳՅԱՆ**

ԷՍՍԵ

# ԳՆԱՑԻ՜Ն, ԿՈՐԱ՜Ն ՏՂԱՆԵՐԸ ԻՄ... ՈՐ ԱՊՐԻ ՀԱՅԸ



...Տարակուսանքի այս ԺԱՄ-ին վախենում, շատ եմ վախենում մտածել, վախենում եմ անգամ արտաբերել, թե ապարդյուն կորան այն սեգ ու հպարտ, այն գեղեցիկ ու խելացի տղաները, այն հերոս տղաները, իմ տղաները, իմ հոգու ու սրտի, իմ մտքերի տիրակալ տղաները, իմ տղաները, ինձ աշակերտած, իմ հոգուն ոգի, հուր ու կրակ տված իմ աշակերտ տղաները, իմ գործընկեր տղաները, ժամանակի մարտահրավերներից ու հրամաններից չերկնչած, չընկրկած, այսօր երկնքում ճախրող տղաները...

1992թ. հոկտեմբերյան մի ջերմ օր մեր սրտի քաղաք, մեր մայր քաղաք Երևանում, Արաբկիր շուկայի մոտ հանդիպեցի իմ անկրկնելի աշակերտուհի Գայանեին: Նրա՝ ինձ տված լուրից ոտքերս ծալվեցին, ակամայից անփութորեն նստեցի շուկայի աստիճաններին, որ չընկնեմ, որ ինձ տիրապետեմ. Ոչինչ չէր ընկալվում, այդ պահին ականջներս ասես խլացել ու ոչինչ չէին ընդունում, ոչինչ: Ինչպե՞ս թե չկան տղաները, ինչպե՞ս թե ինքնամոռաց ու խենթ, քաջ ու անվախ տղաները՝ Աշոտն ու Սամվելը չկան... Ի՛նչ, էլի նոր զոհե՞ր, զոհերի շարքերի նոր համալրո՞ւմ... Իսկ մինչ այդ... Իսկ մինչ այդ հունիսի 12-ը աղետաբեր, գուժկան օր էր, գյուղի ողջ բնակչության համար, գյուղի հազարամյա պապերից շինված ապաստարաններից մեկում՝ Նեսունց ապաստարանում ծվարել, շնչասպառ սպասումներով, թշնամու հրետանու չընդհատվող կրակոցներից ու համազարկերից այլևս հոգնած ու ահաբեկ օրվա ավարտն էին ապրում մեծ ու փոքր, մայրեր, տատիկներ... Իջնում էր գիշերը, իսկ կրակոցները վերջ չունեին: Ասես հայոց պատմությունից մեր իմացած Առաքելոց Վանքի դուռն էր. ճռնչոցով բացվեց, իմ ուշիմ ու խելացի աշակերտներից էր, այլևս հասուն, համալսարարանական կրթություն ստացած, հեղինակություն վայլելող երիտասարդ Սուրենը Ծատրյան: Բացեց դուռը և ասաց, որ այլևս հնարավոր չէ, թուրք-ազերին հասել է Ասկերանի մատույցները, մարտերը թեժ են, վատագույն իրավիճակը հասել է մեր դուռը, և պետք է կին ու երեխա տեղափոխվեն Ստեփանակերտ: «ԿամԱԶ» մակնիշի բեռնատարներ էին եկել: Շիկացած, հրեղեն երկնքի ներքո վազելով հասանք գյուղի ներքևի մասը (ես՝ մեկ մաշիկով, վազելուց կորցրել էի մյուսը)՝ «Գարաժներ»-ի մոտ: Ահավոր էր, ահասարսուռ: Ճանապարհին չէի ուզում առաջ վազել ու թողնել տարեց, շատ հարգարժան, վաստակաշատ Հակոբյան մանկավարժներին, բայց նրանց հորդորն ու կշտամբանքը գոնե մի քիչ սթափեցրին, գոտեպնդեցին ինձ. «Դու փոքր երեխաներ ունես, երեխաներդ քեզ են սպասում, մեզ մի՛ սպասիր, առա՛ջ անցիր»: Եվ ո՜նց չէ, չես կարող նեղանալ քո հարևան Համոյից, որը մերժեց իրեն պարզած քո ձեռքը՝ օգնելու բարձրանալ մեքենան, չես կարող նեղանալ, երբ նա քեզ պարզ ասաց, որ նախ օգնում է բարձրանալ իր ծեր մորն ու երեխաներին... Ոչինչ, հետո քեզ մի ուրիշ ձեռք պարզվեց և օգնեց: Այդպիսին էր իրավիճակը: Դաժան իրավիճակ երեսուն տարի առաջ, ավելի քան դաժան իրավիճակ՝ երեսուն տարի հետո:

...Աղաղակում, ճչում էին մայրերը, այդ օրը զոհված տղաների՝ Արմենի, Պավելի, Աշոտի մայրերը, բոլորի հույս ու հավատ, գյուղի դպրոցի զինղեկ Արթուր Հայրապետյանի մայրը՝ Ասյա մայրիկը, ում ողբի ձայնը իմ ականջներում է ցայսօր... Արթուրի, ով մերձբալթյան Կաունաս քաղաքում (Կովնո) զինվորական կրթություն ստանալուց հետո եկել էր հայրենի գյուղ՝ Խնապատ, անդամագրվել Արծիվների երամին, դարձել Երամն առաջնորդող հզոր Արծիվներից, ով աշխատանքային օրերից մի օր (իսկ մենք ճիշտ այսօրվա պես ակնթարթներով էինք ապրում, անորոշության մեջ, լավ լուրերի սպասումով) դպրոցի բակում նստարանին նստած, ձեռքերն ու մատները անընդհատ իրար շփելով, անհանգիստ, ասես ուր որ է՝ պիտի վազեր կամ թռչեր, այո, թռչեր: Մեր հարցին՝ ինչպե՞ս եք, պատասխանեց բառացիորեն. «Չեմ կարողանում հանգիստ մնալ, մի օր անգամ չեմ կարող մարտադաշտից հեռանալ, կռվել, կռվե՜լ եմ ուզում, որ Արցախում իմ կռիվը ավարտվի, ես կգնամ աշխարհի ամենաթեժ կետը»: Եվ ինչպիսի՜ նվիրումով էին ճախրում տղաները մարտադաշտում, այո՛, ազգայինազատագրության շնչով ու գաղափարով տոգորված ինքնամոռաց թռչում-սլանո՜ւմ էին տղաները... Ավա՜ղ, հունիսի 12-ին ամենաասլաց ճախրանքի պահին ընկավ Արթուրը, մեր անմոռանալի Արթուրը, որն իր շիրմին մոտ դեռ տեղ ու հանգրվան էր տալու իրեն հաջորդաբար հետևող տղաներին, հրամանատար տղաներին՝ Աշոտ և Անդրանիկ Պետրոսյաններին, Սուրեն և Սանասար Ծատրյաններին, Մանվելին ու Քաջիկին, արհեստավարժ և լավ մանկավարժ Սլավա Մելքումյանին, Աշոտ Բաբայանին՝ այն գեղեցիկ, պատուհանի տակ երրորդ նստարանին նստող տղային, որ անգիր գիտեր իր ժողովրդի պատմությունը, վեպեր էր կարդում, ուսուցչուհուն լրացուցիչ և հետաքրքիր նյութեր հաղորդում, ով ոչ միայն շատ գեղեցիկ, այլև դիմացինին օրինակելի դաստիարակություն, բարեկրթություն մատուցող տղա էր: Խելացի, միշտ ժպտերես Քաջիկին, Մանվելին Բեգլարյան, որ տղաներին դիրքեր հաց տանելիս մնաց կես ճանապարհին՝ մասնատված մարմնով, որ դեռևս ութերորդ դասարանում ուսանելիս մի դասամիջոցի ծալծլված փոքրիկ թուղթ է հապշտապ դրել ուսուցչուհու սեղանին ու դուրս վազել. Իսկ թղթի մեջ գրել էր, որ թերևս երրորդ «երկու»-ն է ստանում նրանից, բայց նա շատ լավ ու բարի կին է: Ավա՜ղ, և այդ կինը, այդ ուսուցչուհին այսօր արտասվաթոր աչքերով իր ցավեցնող հուշերն է տալիս թղթին, պահ տալիս պատմությանը...

...Գնացի՜ն-կորան հերոսապատում կերտած մեր տղաները, միախառնվեցին Վասն Հայրենյաց այնտեղ, սարերում, կիրճերում մնացած հայդուկների խմբերին և, Ո՜վ Անքննելի, ո՛վ գիտի, գուցե հավերժական Պա՜ր են բռնել ու սավառնում են հայրենի երկնակամարում. առայսօր անպարագիծ, բաց դռներով, անվերջակետ մի մեծ ՊԱՐ...

...Իմ Էդվարդ Գրիգորյան աշակերտը, անվախ, խրոխտ Էդոն՝ գյուղի քաջարի տղանց ջոկատի առաջին զոհերից, Սամվելը Մելքումյան. այն պարկեշտ, ազնիվ ու բանիմաց միջնուճարը տան, որ սպանվեց Փառուխի բարձունքում, այն Փառուխի, որ երեսուն տարի անց էլ դեռ կռվախնձոր Արցախ աշխարհի թեժ ու կրակների մեջ առնված բարձունքներից է: Խաժակն, երեք քույրերի եղբայր միջնուճար, ընդամենը 18 տարեկան Սամվելը Ասրյան՝ դասերին միշտ խելոք նստած, միշտ խորահայաց...

...Ի՜նչ իմանար ուսուցիչը, ամեն ինչ միայն ուղիղ դատող, ուղիղ տեսնող, երիտասարդ ուսուցիչը, որ չգիտես ինչու (այսօր ուզում եմ ասել՝ մոր իրավունքով), այդ տարիներին նաև «երկու» գնահատականն էր հաճախ նկարում, ի՞նչ իմանար, թե պատերազմ է լինելու երկրում, ի՜նչ իմանար, թե տղաները հայրենի սարերում հայդուկզինվորներ են դառնալու, ի՜նչ իմանար, թե դասամատյանում իր նշած գնահատականներն ինչքա՜ն նսեմ-նսեմ, ոչնչություն են լինելու, նրանց ապրած կյանքի, նրանց՝ մեզ թողած մեծ ԴԱՍ-ի, Հայրենապաշտության ԲԱՑ ԴԱՍՈՒՄ նրանց վաստակած անգնահատելի ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ դիմաց:

... Մեր տառապած, բայց փառապանծ պատմության մի ՈՍԿԵ ԷՋ: Հերթական ոսկե էջը, որ պիտի գրվի, պիտի դաջվի տառ առ տառ, բառ առ բառ, անուն առ անուն:

Անուն առ անուն. նվիրյալների անսկիզբ ու անվերջակետ պատմություն, պատվախնդիր, բայց անողոք պատմություն և թերևս նվիրյալների ու նվիրումի, բայց շատ դաժան պատմություն: Հայրենիքին ապրեցնող, զորացնող սերունդ է հարկավոր, որ կորսվածը հետ բերենք, ամբողջանանք, ու բա՛վ է, թո՛ղ վերջանա, թո՛ղ շիրմաքար դրվի պատերազմ ասվածին: Այդպիսին էր իրավիճակը, դաժան իրավիճակ երեսուն տարի առաջ, ավելի քան դաժան իրվիճակ՝ երեսուն տարի հետո, որ ունի շատ ցավեցնող մի Սև անուն՝ 2020 թիվ:

Սա է մեր պատմությունը. Վերելք ու վայրէջք, սա է հազարամյա ՀԱՅԻՍ պատմությունը. Պայքա՛ր, նորի՛ց պայքար, էլի՝ ՊԱՅՔԱ՛Ր... Զորացի՛ր, ա՛զգ իմ, երկի՛ր իմ, զորացի՛ր, զորացի՛ր այնպես, որ թշնամիդ չհանդգնի ոտք ձգել քո դարպասներին, քո դռներին, էլ չհանդգնի՛, և վերջակետվի՛ նահատակ նվիրյալների պատմությունը... Հայորդին ապրի՛, տունը շենանա՛, տունը զորանա...

...Ի՛մ ընկա՛ծ սաներ, ի՛մ հաշմված, հերոսացա՛ծ սաներ: Թե՛ այնօր, թե՛ այսօր. Ձեզ համար ցավում, շատ է ցավում սիրտը մեր՝ նոր դավ ու ցավով հրակեզ դարձած: Ցավում է բոլոր տղաների համար, Ձեզ համար, որ անշունչ ու լուռ մարմարե քաղաքներ կառուցվեցին, անեզր, անվերջ քաղաքներ, քաղաքներ լուռ ու անշունչ, ամայի փողոցներով, բայց Սո՜ւրբ քաղաքներ:

...Եվ ո՛վ է, ո՞վ է «դրախտ» կոչվածի ՏԵՐ-ը շատ անգութ, տերը անարդար, որ ցավով լեցուն իր պտուղները այսպես շռայլ, առատորեն է բաժին հանում իմ ժողովրդին, իմ երեք հազարամյա ժողովրդին, որ կոփվել՝ ժայռ ու Քար, Քարաստան է դարձել: Բավակա՛ն է, դե՛ լսո՞ւմ ես դու մեզ, հոգնել, հագեցել, շատ ենք հագեցել, մրմուռ ու դառը քո պտուղներից: Մենք բողոք ունենք, լսո՞ւմ ես Դու մեզ, քո պտուղներից քիչ բաժին հանիր մեր ՔԱՐ երկրին, մեր անուշ երկրին:

Քո պտուղները՝ իմ ժողովրդի, մեր ցավից, մեր արտասուքից խմորված քո պտուղները, որ հարկադրված ու պարտավորված մենք կուլ ենք տալիս, հեռո՛ւ տար մեզնից: Բավական է, դե՝, ո՜վ դու անաստված, մեր կամքը փորձես...

«Երկնային դրախտ»՝ դեռ բաց դռներով, մարմարե տներով, մեր որդիների հավերժակա՛ն քաղաքներ, ԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏ-ի օջա՛խ-քաղաքներ: Տղանե՜ր մեր քաջ, ընկա՛ծ տղաներ, գոցե՛ք ու փակե՛ք դեպի Ձեզ բերող դռները բոլոր, դո՛ւ՝ իմ քաջ Վահագն, իմ Արե՛ն, Նելսո՛ն, Հրա՛նտ, Դավի՛թ ու Սասո՛ւն, դո՛ւ՝ Իմ Արարատ, իմ հպարտ ու սեգ, դո՞ւ իմ Արարատ. Փակե՛ք դռները դուք նոր զոհերի, մահերի առաջ: Մեծ փական կռեք ու փակեք դուռը Ձեր քաղաքների, լուռ քաղաքների ու հանգիստ քնեք, Ձեզ բաժին հասած քունը երկնային թող հանգիստ լինի...

Ու թո՛ղ զորանան սերունդները Ձեր, որ Ձեր որդիքն են՝ ուստրեր ու դուստրեր, թոռներ սիրասուն, Ձեզ պես գեղեցիկ, Ձեզ փոխարինող քաջարի սերունդ. ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՀԱՅՈՑ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԵՐԹԻ անկանգ հերթապահության առաջին շարքերի մարտիկներն ու նվիրյալները երկրի...

Թո՛ղ ապրեն ու զորացնեն երկիրը մեր, բա՛վ է ունենալ նահատակ նվիրյալների շարքերի նոր համալրում, բա՛վ է, բավակա՛ն:

«Երկնայի՛ն դրախտ» դռներդ փակի՛ր: Այստեղ՝ մեր երկրում, մեր հողի վրա նրանք շատ են պետք, նրանք շատ են պետք՝ մեր ԱԶԳԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ մեր պահելու համար:

Իսկ թե դա է դրախտ ասվածը, չէ, ապրողներին, հայրենիքը պահողներին, երկրին պետք չէ նման դրախտը, երկիրը պիտի զորանա, և հայրենի հողում պետք է արարել ու վայելել դրախտը, ապրել հայրենի հողի վրա ու այն դարձնել իրական դրախտ:

Հայրենի հողի շինհարթակներում, արտ ու դաշտում թո՛ղ խոնջանան, քրտնեն, կառուցեն ու արարեն խաղաղ երկրային կյանքով ապրող նվիրյալները մեր:

...Եվ գրիչները մելանով լեցուն անդադար գրեն հուշապատումի ՈՍԿԵ ՄԱՏՅԱՆԻ էջերը բոլոր. որ ամեն մեկը մի քաջորդի է, մի տան ճրագ է, մի մեծ մոր սիրտ է... մի ժողովրդի մեծ պատմություն է՝ դարերով խոցված, դարեր շալակած Հայոց Պատմություն...

**Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 դպրոցի փնօրեն**

*Մարզական*

# ԲԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Մարտի 21-ին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ու Պաշտպանության նախարարությունների կողմից Ստեփանակերտի հ. 1 դպրոցի մարզադահլիճում համատեղ անց է կացվել բանակային ձեռնամարտի առաջնություն տարբեր զորամասերի զինծառայողների միջեւ: Առաջնությունն անց է կացվել մեկ քաշային կարգում՝ 52 մարզիկ-զինվորների մասնակցությամբ: Առաջնությունը 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո կազմակերպված առաջին մեծ մարզական միջոցառումն է, որին մասնակցել են զինվոր-մարզիկներ գրեթե բոլոր զորամասերից:

Բանակային ձեռնամարտի առաջնության գլխավոր մրցավարն էր բանակային ձեռնամարտի նախկին մարզիչ, միջազգային կարգի մրցավար, Արցախի վաստակավոր մարզիչ Արմեն Պետրոսյանը:

Արցախում բանակային ձեռնամարտի առաջնություններ անց են կացվում 2015 թվականից: Արմեն Պետրոսյանը, անցնելով համապատասխան վերապատրաստում (2016թ., Սանկտ-Պետերբուրգ, ВИФК) եւ ստանալով միջազգային կարգի մրցավարի ու բանակային ձեռնամարտի մարզչի կոչում, հանձն է առել առաջնությունների կազմակերպումը, որոնց նպատակը զինծառայողների լավ



մարզավիճակն ու նրանց մոտ մարզական աշխուժություն պահպանելն է, ինչպես նաեւ լավագույն մարզիկներին ի հայտ բերելը, որոնք նաեւ Արցախից դուրս մասնակցում են բանակային ձեռնամարտի առաջնություններին:

Արմեն Պետրոսյանը պարզաբանեց, որ բանակային ձեռնամարտի առաջնությանը մասնակցում են տարբեր մարզական փորձ ունեցող զինծառայողներ, որոնք մրցումների ժամանակ պաշտպանում են ոչ միայն բանակի, այլեւ իրենց մարզաձեւի պատիվը:

Բանակային ձեռնամարտն իրենից ներկայացնում է հարվածային եւ գցումային տեխնիկա պարունակող մենապայքարային բանակային մարզաձեւ: ՊԲ-ում ձեռնամարտը ֆիզիկական պատրաստության հատուկ ձեւերից մեկն է: Հաշվի առնելով բանակային առանձնահատկությունները՝ ունի հատուկ պաշտպանիչ հանդերձանք՝ մետաղյա ճաղացանցով սաղավարտ, զրահաբաճկոն, հատուկ ձեռնոցներ, ոտքերի սրունքների պաշտպանիչներ, ըմբշամարտի կոշիկներ, աճուկապաշտպան խեցի:

Մարտերի ժամանակ թույլատրվում են ոտքերով ու ձեռքերով հարվածներ, տարբեր տեսակի բռնվածքներ, գցումային հնարքներ, ցավեցնող հնարքներ, ինչն էլ թույլ է տալիս տարբեր մարտարվեստներով զբաղված զինծառայողներին կարողանալ մասնակցել առաջնություններին, որոնց նախապատրաստվելու եւ մարզիկների՝ պաշտպանիչ հանդերձանքին ադապտացնելու համար որոշակի մարզումներ են անցկացնում:

Արմեն Պետրոսյանը նշեց, որ ԿԳՄՍ նախարարությունը տրամադրել է առաջնության ուսումնանյութական բազան, հրավիրել է մրցավարական կազմը, իսկ խրախուսման բազան ապահովվել է ՊՆ-ի կողմից: ՊՆ-ի կողմից նաեւ շնորհակալագրեր են հանձնվել կազմակերպիչներին:

Գլխավոր մրցավարի խոսքով՝ մարտերը դիտարժան էին, քանի որ մասնակցում էին այլ մարզաձեւերում տիտղոսներ ձեռք բերած մարզիկներ: Հատկանշական են պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ կիոկուշին կարատեի աշխարհի եւ Եվրոպայի պատանիների միջեւ առաջնությունների մրցանակակիր Պավել Մնացականյանի (70 կգ, 19 տ.) ու սանդա ուշուի ՀՀ չեմպիոն, միջազգային տարբեր մրցաշարերի մրցանակակիր Դավիթ Իսախանյանի (65 կգ, 19 տ.) մարտերը, որոնք ավարտվել են բացարձակ առավելությամբ հաղթանակներով, ինչն էլ ավելի դիտարժանություն է հաղորդել մարտերին:

2017թ. Արցախում պատրաստված հավաքականը Ղրղզստանում մասնակցել է ԱՊՀ երկրների միջեւ երկրորդ բանակային խաղին Չոփան-Աթա քաղաքում եւ վերադարձել մրցանակային տեղերով: 2019թ. Ղազախստանում մեր մարզիկները 4 հոգանոց կազմով մասնակցել են ՀԱՊԿ բանակային ձեռնամարտի մրցաշարին եւ զբաղեցրել մրցանակային տեղեր:

Այս անգամ առաջնությունում իրենց լավագույնս դրսեւորած մարզիկներն Արցախից դուրս առաջնություններին մասնակցելու հնարավորություն չունեն շրջափակման պատճառով: Մինչդեռ բարձր մակարդակով կազմակերպված առաջնությունն ու զինվոր-մարզիկների գերազանց ելույթները կրկին փաստում են արցախցու անպարտ ու ամրակուռ ոգին:

**Ս. ԱՎԱԳՅԱՆ**

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ

# ՄԱՀ՝ ՀԱՆՈՒՆ ԿՅԱՆՔԻ

*Միայն նա է ճշմարտորեն մեծը,*
*որը մեծ զավակն է նախ իր ժողովրդի*
*և ապա՝ մարդկության:*

**Գարեգին Նժդեհ**

Ամեն հերոս ունի յուրահատուկ ճակատագիր, պայքարի իր ճանապարհը, կյանքի մասին իր պատկերացումները, սակայն բոլոր հերոսների համար գոյություն ունի միասնական ու անփոփոխ մի նպատակ՝ հայրենիքի պաշտպանությունը, որի համար նրանցից յուրաքանչյուրը պատրաստ է նվիրաբերել ամենաթանկը՝ կյանքը ու ընտրել անմահության ճանապարհը: Նրանք այլընտրանք չունեն ճակատագրական պահին, որովհետև հայրենիքից թանկ այլ բան չեն էլ պատկերացնում, կյանքը երկընտրանքի տեղ չի թողնում:

Երբ որոշեցի թղթին հանձնել տողերիս հերոսի պատմությունը, պարզեցի, որ 44-օրյա պատերազմի ժամանակ անողոք ճակատագիրը ոչ միայն նրա կյանքն է խլել, այլև կրտսեր եղբոր: Պատկերացնում էի նրանց ծնողների ծովածավալ ցավն ու հոգեմաշ տառապանքները, որ ունեցել են երկու զավակների կորստյան պահերին:

Ժամանակը երբեք էլ չի բուժում վերքերը. դա ընդամենը մի սփոփիչ խոսք է, որ մարդկությունը հորինել է իր համար՝ ցավի մեջ գտնվողին մխիթարելու համար, սակայն ոչ ոք դիան չի հավատում: Հարցրեք նրանց, ովքեր կորստի մեծ ցավ են ապրել, և կհաստատեն այն պարզ ճշմարտությունը, որ ցավը երբեք ու երբեք էլ չի բուժվում. մենք ինքներս ենք փորձում մեզ խաբել: Իրոք, դա այդպես է:

Տարիներ առաջ Ավետիս և Սրբուհի Խաչատրյաններն իրենց աշխարհի ամենաերջանիկ ծնողներն էին համարում, որովհետև ընտանիքում հասակ էին առնում չորս արու զավակներ՝ Արտակը, Արսենը, Արմենը և Ալեքսը: Ամեն որդու լույս աշխարհ գալով հարազատներն ու բարեկամները, ընկերներն ու հարևանները շտապել էին նրանց տուն՝ աչքալուսանքի. մաղթել էին առողջություն, խաղաղ երկինք, անհոգ մանկություն:

Ամեն ինչ այլ կերպ կլիներ, եթե չլիներ 2020 թվականի 44-օրյա աղետը…



Իմ հերոսը՝ Արտակ Խաչատրյանը, ծնվել է 1993թ. ապրիլի 23-ին Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքում: Լինելով ը ն տ ա ն ի ք ի ա ռ ա ջ ն ե կ ը՝ Ա ր ց ա խ յ ա ն առաջին պատերազմի տարիներին իր ծնունդով մեծ հույս ու ոգևորություն պարգևեց Խաչատրյանների օջախին: Ինչպես Արտակն էր հաճախ սիրում կրկնել՝ «Բամբակի մեջ պահած երեխա էի»: Երջանիկ ծնողները ոչինչ չեն խնայել իրենց առաջնեկին ջերմ սիրով ու հոգատարությամբ պարուրելու համար: Արտակն ընդամենը 5 տարեկան էր, որ ընտանիքը փոխեց բնակության վայրը ու հաստատվեց Ասկերանի շրջանի Իվանյան համայնքում: 2000 թվականից սկսեց հաճախել Իվանյանի միջնակարգ դպրոց: Ընկերասեր էր, կարգապահ, դաստիարակված ու աշխատասեր աշակերտ: Նույն դպրոցը հաճախեցին նաև նրա երեք եղբայրները, որոնց համար Արտակը ամուր թիկունք էր ու հենարան, հուսալի պաշտպան: Որպես տան ավագ զավակ՝ նա ողջ պատասխանատվությունը իր ուսերին էր կրում, օգնում մայրիկին տնային գործերում ու եղբայրների դաստիարակության հարցում: Հատկապես մեծ է եղել նրա հոգատարությունը ամենակրտսեր եղբոր՝ Ալեքսի դաստիարակության գործում, որին հենց ինքն է անվանակոչել:

Դպրոցական տարիներին Արտակը շատ էր հետաքրքրված աշխարհագրություն առարկայով, սակայն հետո նախասիրությունը փոխվեց, և սկսեց հափշտակվել կենսաբանությամբ ու անատոմիայով. բժշկությունը ձգում էր նրան:

2010-ին ավարտելով Իվանյանի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանը՝ Արտակն ընդունվեց Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան բժշկական քոլեջի ռազմաբուժական ֆակուլտետը: Շատ էր սիրում իր մասնագիտությունը, լավ էր ընկալում ուսումնական նյութը, հետաքրքրությամբ ուսումնասիրում մարդու անատոմիան: Ընկերական շրջապատում սիրված ու հարգված էր, օժտված կազմակերպչական տաղանդով, հումորի յուրօրինակ զգացումով: Սիրում էր կյանքը, կենսախինդ երիտասարդ էր, ուներ մեծ ու բարի սիրտ, պատրաստ էր ցանկացած իրավիճակում ձեռք մեկնել բոլորին, հատկապես՝ ավագներին:

2013 թվականին, երբ Արտակը պիտի ավարտեր քոլեջը, դասախոսներն ու քոլեջի տնօրինությունը հորդորում էին նրան անպայման ուսումը շարունակել Երևանի բժշկական համալսարանում, քանի որ դրա համար նա ուներ համապատասխան գիտելիքներ ու բացառիկ տաղանդ, սակայն նրան այլ ճակատագիր էր սպասվում:

2013թ. ժամկետային զինծառայության անցավ ՀՀ ԶՈՒ Հադրութի զորամասում՝ որպես վաշտի ռազմաբուժակ: Ծառայության ընթացքում ցուցաբերել է բարձր պատասխանատվություն ու պատրաստակամություն, ինչի շնորհիվ էլ արժանացել է սերժանտի կոչման:

2015-ին ավարտելով ժամկետային ծառայությունը՝ շարունակել է ծառայել արդեն որպես պայմանագրային զինծառայող Մարտակերտի զորամասում՝ ստանձնելով զորամասի դեղատան պետի պաշտոնը մինչև 2018 թվականը:

2016թ. մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմին ու այդ կարճ ժամանակահատվածում հասցրել փրկել 100-ավոր վիրավոր զինծառայողների կյանքեր: Կամքն աներեր էր, հոգին՝ նվիրական:

Երկու տարի անց՝ 2020թ. փետրվարին, նա վերադառնում է իրեն շատ հարազատ դարձած Մարտակերտի զորամաս և ստանձնում գումարտակի ռազմաբուժակի պաշտոնը: Ծառայակից ընկերների բնութագրմամբ՝ Արտակին զորամասում շատ էին սիրում ու հարգում թե՛ որպես մարդու, թե՛ որպես լավ ընկերոջ ու թե՛ որպես իր գործի քաջատեղյակ մասնագետի:

2020թ. սեպտեմբերի 27-ին, երբ պատերազմի հրձիգները խախտեցին Արցախի անդորրը, Արտակը գտնվում էր Երևանում. զորամասից ուղարկել էին վերապատրաստման դասընթացների: Երբ պատերազմի բոթը հասավ Երևան, մեր հերոսն առանց երկմտելու շտապեց Արցախ ու անմիջապես մեկնեց առաջնագիծ: Իրական հերոսներն այսպիսի տղաներն են, որոնց համար երկրի ճակատագիրն առաջնահերթ գործոնն է, պատասխանատվության ասպարեզը՝ հայրենիքի պաշտպանությունը:

Նա մասնակցեց Մարտակերտի ծանր մարտերին: Անձնուրաց երիտասարդին ոչինչ չէր կարող կոտրել, սակայն եղբոր՝ Արմենի զոհվելու բոթը ծանր հարված եղավ նրա համար, և հոկտեմբերի 20-ին հայրական տուն վերադարձավ, մասնակցեց եղբոր հուղարկավորությանը ու չնայած մոր՝ Սրբուհու հորդորներին, որ գոնե մնա մինչև եղբոր 7-ը, Արտակը կրկին ճակատ մեկնեց՝ ասելով.

- Հասկանո՞ւմ եք, ես չեմ կարող զինվորներիս թողնել անօգնական. նրանք իմ օգնության կարիքն ունեն, ո՞նց թողնեմ նրանց:

Ասաց ու մեկնեց. 18 տարեկան զինվորները նրան էին սպասում: Նա էր ոգի ու շունչ տալիս վիրավոր զինվորներին:

2020թ. հոկտեմբերի 23-ին դիրքեր բարձրացավ ու հենց հաջորդ օրը տեղափոխվեց Մարտունի: Եղել է Մարտունու շրջանի ամենաթեժ կետերում՝ Կարմիր շուկա, Ճարտար, Ճարտարից ոչ հեռու գտնվող «Ուլյան» կոչվող բարձունքում:

2020թ. հոկտեմբերի 27-ի գիշերը՝ վիրավորներին մարտի դաշտից դուրս բերելու ժամանակ, Արտակը ծանր վիրավորվեց: Ստիպված եղան նրան տեղափոխել այլ շտապօգնության մեքենա, որը հոսպիտալի ճանապարհին կրկին թիրախավորվեց թշնամու կողմից: Ցավոք, փրկել հերոսի կյանքը չհաջողվեց… Արտակը տեղում անմահացավ…

Միայն մեկ ամիս անց՝ նոյեմբերի 20-ին, ԴՆԹ փորձաքննության արդյունքում գտնվեց անմահ հերոսը: Դե՝ արի ու մի՜ խենթանա, հա՛յ մայր, հոգիդ՝ դատարկ, վիշտդ՝ ջրաղացի քար…

Ամիսներ անց Արտակի մարտական ընկերները պատմում էին, որ նա չափազանց արիասիրտ մարդ էր: Լինելով ռազմաբուժակ՝ կատարել է ոչ միայն իր, այլ նաև շտապօգնության մեքենայի վարորդի պարտականությունները. ինքն էր վարում մեքենան:

Ցուցաբերելով առաջին բժշկական օգնություն հենց ռազմի դաշտում՝ փամփուշտների ու արկերի տարափի ներքո հարյուրավոր վիրավորների ու զոհերի ուսերի վրա հանել է ռազմի դաշտից: Այնուհետև նրանց տեղավորել է իր իսկ ձեռքով ձևափոխված՝ երկհարկանի դարձրած շտապօգնության մեքենայում, նստել ղեկին ու արհամարհելով ռմբակոծությունն ու մահը՝ հասցրել հոսպիտալ ու այդպես փրկել 100-ավոր կյանքեր՝ զոհաբերելով սեփականը:

Արտակն էլ շատերիս պես սիրում էր կյանքը. շատ բարի, հանդուրժող, ներողամիտ բնավորություն ուներ: Խուսափում էր անտեղի վիճաբանություններից ու անիմաստ խոսակցություններից, շատ հավասարակշռված, հանգիստ ու խաղաղասեր երիտասարդ էր: Միևնույն ժամանակ կատակասեր ու կենսախինդ էր ընկերական շրջապատում, ուզում էր, որ բոլորն ուրախ լինեն, ժպտան: Մարդ, որից միայն սեր ու ժպիտ էր ճառագում, բայց և չափազանց լուրջ էր ու որոշումների մեջ՝ աներկբա: Հարազատների, բարեկամների ու ընկերների համար նրա խոսքը հարգի էր ու ընդունված, ինքն էլ իր խոսքի տերն էր. խոստացել է՝ անպայման կկատարի:

Բոլոր երիտասարդների պես Արտակն էլ ապագայի մասին բազում ծրագրեր ուներ, երազում էր մեծ ընտանիք ունենալ, շատ երեխաներ պարգևել մեր աշխարհին: Հատկապես երազում էր աղջիկ երեխաների մասին:

Հայրենիքի նվիրյալն արդեն սիրած աղջիկ ուներ, հասցրել էր նշանադրվել, և շուտով պետք է ամուսնանային, եթե չխանգարեր անիծյալ 44-օրյան, որի հետևանքով ի չիք դարձան ապագայի բոլոր ծրագրերը:



Գ ո ւ մ ա ր տ ա կ ի ռազմ ա բ ո ւ ժ ա կ, ավագ սերժանտ Արտակ Խաչատրյանը այժմ հանգչում է Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի զինվորական պանթեոնում իր եղբոր՝ լեյտենանտ Արմեն Խաչատրյանի հետ կողք կողքի:

Ցուցաբերած արիության ու սխրագործության համար Արտակը պարգևատրվել է «Մարտական ծառայություն» (2020թ.) և «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի (հետմահու, 2021թ.) մեդալներով, Արմենը՝ «Արիություն» (2020թ.), «6-րդ ՊՇ անձնուրաց պաշտպան» մեդալներով:

Եղբայրը՝ Արսենը, շարունակում է Արտակի ու Արմենի գործը. պայմանագրային զինծառայող է, իսկ կրտսեր եղբայր Ալեքսը՝ ուսանող:

Բոլոր տեղեկությունները հերոսի մասին ինձ տրամադրել է Արտակի սիրած աղջիկը, որը համեստորեն հորդորեց չհրապարակել իրենց մեծ սիրո մասին: Ես էլ խոնարհաբար կատարեցի խոստումս:

Ապրիլի 23-ին Արտակ Խաչատրյանը կդառնար 30 տարեկան:

Փա՛ռք մեր բոլոր հերոս տղաներին:

Արժանի՛ լինենք նրանց սուրբ գործին:

**Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ**

# ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ԱՐՑԱԽԻ ԱՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ԳՐԵԹԵ 90 ՏՈԿՈՍՆ ԱՅՍՕՐ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի նախաձեռնությամբ Թեքեյան կենտրոնում բացվել է լրագրող, խմբագիր, լուսանկարիչ, արցախյան ազատամարտիկ Զոհրաբ Ըռքոյանի լուսանկարների ցուցահանդեսը՝ «Հնադարյան Արցախ» խորագրով: Ներկայացված են հեղինակի տարբեր տարիների շուրջ 80 աշխատանքներ, որոնցում պատկերված է գրեթե ողջ Արցախի հուշարձանային ժառանգությունը՝ վանքեր, ամրոցներ, խաչքարեր… Ցուցահանդեսի բացմանը ներկա էին մտավորականներ, հոգեւորականներ, արվեստի ներկայացուցիչներ եւ բազմաթիվ այլ հյուրեր: Ողջույնի խոսքով հանդես եկավ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի տնօրեն Արմեն Ծուլիկյանը՝ նշելով, որ ցուցահանդեսը ավելին է, քան պարզապես մշակութային ձեռնարկ, քանզի թեման ինքնին ընդգծում է նրա պատմական, հայրենասիրական, հոգեւոր կարեւորությունը:

«Այս ցուցադրության մեջ ուղերձ կա՝ սա մեր ժառանգությունն է, որ ստացել ենք մեր նախնիներից եւ պարտավոր ենք փոխանցել մեր ժառանգներին: Ղողանջը, որ հնչում է բոլոր լուսանկարներից, պարտավորեցնող է, ղողանջ է զգոնության եւ սթափության: Մենք պարտավոր ենք վերադառնալ եւ տեր կանգնել մեր ժառանգությանը»,- հավելեց Ա. Ծուլիկյանը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տեր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բա-



դումյանն իր օրհնանքի խոսքն ուղղեց հայրենանվեր միջոցառմանը:

Հեղինակը, ներկայացնելով իր աշխատանքները, նշեց, որ լուսանկարները պատմում են բազմադարյա Արցախի՝ հայոց պատմության ակունքներից եկող այն հիմնական հուշարձաններ մասին (Ամարաս, Ծիծեռնավանք, Դադիվանք…), որոնց գրեթե 90%-ն այսօր գտնվում է գերության մեջ: Միջոցառման ընթացքում ռազմահայրենասիրական երգերով հանդես եկավ երգահան, երգիչ Արսեն Համբարյանը, ինչպես նաեւ «Բեկոր» համույթը՝ ազգագրական պարերով: Թեքեյան կենտրոնում «Հնադարյան Արցախ» ցուցահանդեսը կգործի մինչեւ ս.թ. մայիսի 5-ը:

Զոհրաբ Ըռքոյանը 2010թ.-ից Քաշաթաղի շրջվարչակազմի «ՄԵՐԱՆ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրն է: 1989-1994թթ. մասնակցել է ՀՀ եւ Արցախի սահմանների պաշտպանական-ազատագրական մարտերին, նաեւ հանդես է եկել ՀՀ լրատվական միջոցներով: Պարգեւատրվել է ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ Օզանյան» գերատեսչական մեդալներով, ԱՀ «Մարտական ծառայություն» մեդալով, «Վաչագան Բարեպաշտ» շքանշանով, ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե հուշամեդալով եւ պատվոգրերով, ԼՂՀ կառավարության պատվոգրով, ՀՀ ԵԿՄ հուշամեդալով, ՀՀ ԵԿՄ «20-ամյակ» մեդալով, «Հատուկ գնդի» պատվոգրով, ԱՀ վարչապետի «Հուշամեդալ»-ով: 2022թ. մայիսին ԱՀ լրագրողների օրվա առթիվ ԱՀ նախագահի կողմից արժանացել է «Երախտագիտություն» մեդալի:

*«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամ*

# ՏՈՆ ԵՐԵՎՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Սուրբ Խաչին նվիրված չորս տոներ ունի (Սուրբ Խաչի Երևման, Խաչվերաց, Վարագա Սուրբ Խաչի և Գյուտ Խաչի տոներ):

Այս տոնը հիշատակությունն է 351թ. մայիսի 7-ին տեղի ունեցած մի պատմական իրադարձության, երբ Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի օրոք, օրվա երրորդ ժամին (մեր ժամանակով՝ ժամը 9-ին) երկնքում երևում է Փրկչի խաչի նշանը՝ տարածվելով Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը: Սուրբ Խաչի Երևման տոնը շարժական է և նշվում է Զատիկին հաջորդող հինգերորդ կիրակի օրը: Այս տարի այն համընկել է տոնի բուն օրվա հետ և տոնվում է հենց մայիսի 7-ին:

Աստվածային որևէ հրաշք ինքնանպատակ չէ, այլ ծառայում է որոշակի նպատակի, առաջին հերթին՝ մարդու փրկությանը: Երբ Աստված կամենում է անհավատներին հավատի բերել, իսկ թերահավատներին հաստատել հավատի մեջ, Իր ամենակարող զորությամբ հրաշագործում է: Հրաշքն էլ դառնում է այն ազդակը, որը մարդկանց մղում է դեպի



Աստված:

Նման մի լուսավոր ազդակ է նաև Սուրբ Խաչի երևման հրաշքը: Խաչը, որ ցոլարձակեց Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը, ցույց տվեց, որ Նշանն է Նրա, ով խաչվեց Գողգոթայի վրա և համբարձվեց Ձիթենյաց լեռան վրայից:

Այս դեպքին ականատես են լինում ոչ միայն Երուսաղեմում բնակվող քրիստոնյաները, այլև տարբեր դավանանքներին ու կրոններին պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երևումից անգամ Արեգակն է մթագնում: Բոլորը շտապում են եկեղեցի, ի խորոց սրտի աղոթում առ Աստված՝ գոհություն հայտնելով Բարձրյալին՝ այս մեծ շնորհին արժանացնելու համար:

Երկնային հրաշքի շնորհիվ շատերը հավատում են Հիսուսին, մկրտվում սուրբ Կյուրեղի ձեռքով՝ անդամագրվելով Քրիստոսի Եկեղեցուն: Այս դեպքի առթիվ Կյուրեղ հայրապետը մի նամակ է գրում Բյուզանդիայի Կոստանդին կայսրին, որը Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակում սուրբը պատմում է Երուսաղեմում Խաչի երևման մասին՝ հորդորելով, որ վերջինս անհողդողդ մնա իր քրիստոնեական ճշմարիտ հավատի մեջ, ինչպես նաև հավատարիմ՝ նիկիական դավանությանը:

Մեր բազմադարյա պատմության մեջ էլ քիչ չեն Խաչի երևումները: Երանելի Կորյունը, ինչպես նաև քերթողահայր Մովսես Խորենացին Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահվան և թաղման կապակցությամբ արձանագրում են, որ Վաղարշապատ քաղաքում օրեր շարունակ Խաչի լուսապայծառ նշանը փայլել է այն տան վրա, ուր սուրբն ավանդել էր իր հոգին: Այդ նույն նշանն էլ առաջնորդել է թաղման թափորին ամբողջ հուղարկավորության ընթացքում:

Խաչը Հռոմեական կայսրության ժամանակ մահապարտներին անարգելու և նախատելու համար էր: Հին Ուխտում էլ կարդում ենք. «Անիծված է նա, ով կախված է փայտից» (Բ Օր. 21; 23):

Աստվածորդին միացավ խաչափայտին՝ սրբագործելով այն և Իր Սուրբ Արյամբ մեզ ազատեց սատանայի գերությունից: Եթե մինչև Քրիստոս Խաչն անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելությամբ նրա մեջ դրվեց կյանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարավորություն ստացավ նոր արարած լինելու. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, ապա նա նոր արարած է» (Բ Կորնթ. 5:17): Քրիստոս խաչի վրա ներեց մեզ, ջնջեց մեր մեղքերի պարտամուրհակը՝ գամելով այն խաչափայտին:

Մարդկության փրկության համար մարմնացած Աստված խաչվեց, թաղվեց, բայց երրորդ օրը հրաշափառապես հարություն առավ մեռելներից՝ քանդելով մահվան կապանքները: Այո՛, հարություն առավ Տերը, որովհետև Լույսը չէր կարող գերեզմանի մթության մեջ մնալ: Եվ այս իրողությունը նկատի ունենալով է, որ սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. «Դավանում եմ Խաչը, քանզի գիտեմ Հարությունը»: Հետևաբար Խաչը մեզ համար հույսի, սիրո, հաղթանակի և փրկության նշանն է, որի վրա Աստվածորդին պարտության մատնեց սատանային՝ մեր առաջ բացելով երկնքի դռները, որ մինչ այդ փակված էին մեր նախածնողներ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Հիսուսը խաչի վրա ցույց տվեց իր անհուն սերն ու անբավ ողորմածությունն ադամորդիներիս նկատմամբ: Տերն իր փրկագործության խորհրդով Խաչը վերածեց հաղթության նշանի: Ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6; 14): Այո՛, տերունական նշանը ճշմարիտ քրիստոնյաներիս համար պարծանքների պարծանքն ու Աստծո անսահման սիրո արտահայտությունն է անկյալ մարդու նկատմամբ: Ճիշտ է, անհավատ մարդկանց համար Խաչի վրա Քրիստոսի այս զոհողությունն անիմաստ և անհասկանալի է թվում, բայց մեզ համար, որ մեր սրտերի մեջ ընդունել ենք ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, Խաչը դարձել է փրկության գրավական: Անգիտության խավարում խարխափող այս մարդկանց մասին է առաքյալի խոսքը. «Շատերը, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ և այժմ էլ լալով եմ ասում, ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի Խաչի. նրանց վախճանը կորուստն է, նրանց Աստվածն իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը: Նրանք միայն երկրավոր բաներ են խորհում» (Փիլիպ. 3; 18-19):

Ապավինելով Խաչի զորությանը՝ մենք խափանում ենք չարը: Մենք մեզ տյառնագրում (խաչակնքում) ենք և զորացնում, նրանով զարդարում մեր հոյակերտ եկեղեցիները, նրանով կնքում մեր զավակներին, նրանով պսակվում, նրանով էլ գերեզման իջնում՝ հավիտենական կյանքի հույսով: Ինչպես որ Տիրոջ երկրային կյանքը խաչի մի ճանապարհ եղավ, այնպես էլ քրիստոնյաներիս համար, մանավանդ քրիստոնեությունն ազգովի առաջինն ընդունած հայ ազգի համար այս ժամանակավոր կյանքը Խաչի ճանապարհ է:

Մի ճանապարհ, որ անձուկ ու դժվար է, քարքարոտ ու փշոտ, ցավերով ու դառնություններով լի, բայց որի վերջնական հանգրվանը Տիրոջ խոստացած երկնային արքայությունն է:

Սուրբ Խաչի Երևման տոնի պարտավորեցնող պատգամն է, որ խաչակնքվելը մեզ համար ոչ թե ձևական ու մեխանիկական մի շարժում լինի, այլ ամեն անգամ տյառնագրելիս մի պահ անդրադառնանք այն մեծ ինքնազոհությանը, որ Աստված իրականացրեց Խաչի վրա մեր փրկության համար: Մեր աղոթքը վերառաքենք առ ամենաբարին Աստված՝ խնդրելով խաչի տատասկոտ ճանապարհի վրա գտնվող հայ ազգի համար իր աստվածային առաջնորդությունը և կրկնենք մեր հայրերի շուրթերին բյուրեղացած մաղթանքը.

Խաչ Քո Եղիցի մեզ ապաւեն, Տէ՛ր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի՛ ամաչեսցուք յուսացեալքս ի Քեզ,
Այլ զօրութեամբ Քով մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ Քումմէ
Որպէս զորդիս լուսոյ եւ որդիս տունջեան:
(Ժամագիրք)

**Արթուր կարկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Արցախի թեմի ՔԴՔԿ փոխփնօրեն**

# ՃԱԿԱՏԱԳՐԻ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ

Հայկական գարունները դարերի ընթացքում բազմաթիվ անգամ են ներկվել հաղթանակներով: Պատմական ու ճակատագրական իրադարձությունների եղանակն է գարունը:

Ապրիլի 3-ին Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց հուշ-տողան՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմի 7-րդ տարելիցին: Միջոցառումը կազմակերպել է դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Արեգա Մարտիրոսյանը՝ դասարանական աշակերտական կոմիտեի նախագահների մասնակցությամբ: Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Գայանե Գրիգորյանը: Իր ելույթում նա նշեց, որ աշակերտների պարտքն է լավ սովորել, որպեսզի հետագայում, Աստված մի արասցե, եթե հայտնվենք այդպիսի իրավիճակում, կարողանանք կրկնել մեր բոլոր քաջերի սխրագործությունները:



Հուշ-տողանը կրում էր «Ճակատագրի ընտրյալներ» խորագիրը: Դպրոցի ԴԱԿ Ա.Մարտիրոսյանը իր ելույթում նշեց ասաց. «Ճակատագրի ընտրյալներ էին ապրիլյան գործողությունների ժամանակ նահատակված բոլոր հայորդիները, որոնցից 9-ը Հադրութի շրջանից էին»: Միջոցառման ընթացքում այդ 9 հերոսների անունները մասնակիցների կողմից հնչեցվեցին անուն առ անուն՝

1. Հովսեփ Ռաֆիկի Մայիլյան
2. Ռոման Վլադիմիրի Պողոսյան
3. Սուրեն Գրիշայի Մելքումյան
4. Մաքսիմ Վագիֆի Գրիգորյան
5. Ազնաուր Ռաֆիկի Բալայան
6. Նվեր Սարոյի Սիմոնյան
7. Ղարիբ Հայասերի Սահակյան
8. Անդրանիկ Մարատի Գրիգորյան
9. Վարդան Սուրիկի Թադևոսյան

Այնուհետև մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան բոլոր պատերազմներում նահատակված մեր բոլոր հայորդիների վառ հիշատակը:

Ամեն անգամ հիշելով նրանցից որևէ մեկին՝ մարդու սիրտը մղկտում է ցավից՝ ծանոթանալով նրանց կենսագրությանը, տեսնելով նկարները, կյանքով լեցուն աչքերը: Ամեն անգամ հիշատակելով նրանց անունները՝ անիծում ես պատերազմը: Հավերժ փա՛ռք այն բոլոր տղաներին, որոնք իրենց կյանքի գնով անսասան պահեցին Հայրենիքը:

Ապրիլյան քառօրյա պատերազմի մասին խոսվում է ու դեռ կխոսվի: Երբ խոսում է ցավը, լռում է ամեն ինչ: Արցախում կյանքը շարունակվում է, այն փորձում է հաղթել մահին... միայն թե մեր տղաները մեզնից չհեռանային: Մենք գլուխ ենք խոնարհում ձեր հիշատակի առջև, տղաներ՛ր, որ խոնարհ էիք ձեր մայրերի առաջ, բայց երբեք չխոնարհեցիք ձեր գլուխը չարակամ թշնամու առաջ: Ներո՛ղ եղեք, տղաներ՛ր, որ ապրելու բաժինը մեզ տրվեց՝ ձեզ թողնելով հավերժի ճանապարհը:

Միջոցառումից հետո մասնակիցներն այցելեցին Եղբայրական գերեզմանոց և ծաղիկներ խոնարհեցին անմահ զինվորի հիշատակին:

**Արեգա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆՔ ԱՐԱՐԵԼՈՎ

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի կրթական և կազմակերպչական աշխատանքները դադարներ չեն ընդունում: Գարնանային արձակուրդից անմիջապես հետո շարունակեցինք իրագործել նախատեսած ու չնախատեսած մտահղացումները:

Գաղափարը հիանալի էր. Մանկական գրքի շաբաթի կապակցությամբ կատարել շրջայց Մ. Մաշտոցի անվան գրադարան: Ջերմ ու հոգատար աշխատակիցները 2-րդ, 3-րդ և 6-րդ դասարանի աշակերտներին դիմավորեցին մեծ սիրով:



2-րդ դասարանը դասվար Գ. Նարիմանյանի գլխավորությամբ ընթերցասրահում կազմակերպեց Հանս Քրիստիան Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթի քննարկումը և մեծ ոգևորությամբ ձևավորեց փոքրիկ գրքույկներ:

3-րդ դասարանի աշակերտները (դասվար՝ Ա. Հարությունյան) ընթերցեցին ու վերլուծեցին «Տերն ու ծառան» հեքիաթը:

6-րդ դասարանցիների (դասղեկ՝ Ա. Դավթյան) այցը գրադարանին մոտիկից ծանոթանալն էր: Առաջին արտահայտությունը, որ նրանք արեցին հենց շքամուտքում, այն էր, որ գրադարանը հնության հաճելի հոտ ունի: Իսկ այցելությունից հետո գրված շարադրություններից պարզվեց, որ չարաճճի երեխաների ուշադրությունից չի վրիպել ոչինչ: Նրանք խորին հարգանքով նկատել են առաջին հարկում տեղադրված հուշատախտակից իրենց նայող հերոս տղաների հայացքները և մեծ ոգևորությամբ գրել են, որ գրադարանը գրքերի մի մեծ աշխարհ է, որտեղ դեռ էլի ու էլի են գնալու՝ գիրք վերցնելու և լուսավոր ընթերցասրահում ընթերցելու:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՇՏ

# ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



Սույն հոդվածը համեստ փորձ է՝ ներկայացնելու բանաստեղծ Վաղարշակ Գաբրիելյանի ստեղծագործություններից պատառիկներ, որոնք, կարծում ենք, իրենց հնչեղությամբ արդիական են և ընթերցողին ներկայացնելու կարիք ունեն: Հույս ենք հայտնում նաև, որ Վաղարշակ Գաբրելյան բանաստեղծին հետագայում ավելի խորքային կուսումնասիրենք և կներկայացնենք գրական հանրությանը:

Վաղարշակ Գաբրիելյանը ծնվել է 1940թ. Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղի յոթնամյա դպրոցում, ապա ուսումը շարունակել Վանքի և Առաջաձորի միջնակարգ դպրոցներում: 1963-1969 թթ. սովորել և ավարտել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1959-1962թթ. ծառայել է խորհրդային բանակում: Մասնակցել է Արցախյան գոյամարտին և վիրավորվել 1992թ. մայիսին՝ ստանալով 2-րդ կարգի հաշմանդամություն:

Վաղարշակ Գաբրիելյանի բանաստեղծությունները տպագրվել են 1960 թվականից: Հեղինակ է մի քանի տասնյակ բանաստեղծությունների: Բանաստեղծ լինելուց բացի նաև վաստակաշատ ուսուցիչ է եղել: 1967 թվականից հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է աշխատել Մարտակերտի շրջանի Քոլատակի միջնակարգ դպրոցում, միևնույն ժամանակ յոթ տարի ղեկավարել է դպրոցը: Նրա գործընկերներն ու աշակերտները շատ կշեշտեն: «Բազմատաղանդ անձնավորություն էր, հրաշալի նկարիչ-քանդակագործ: Մաթեմատիկայից ես հարցնում, տեղյակ էր, ֆիզիկայից, աստղագիտությունից՝ նույնպես, պատմությունն անգիր գիտեր, իսկ հայոց լեզուն ու գրականությունը նրա տարերքն էին»,- ասում է նրա աշակերտուհին և միաժամանակ գործընկերուհի Սուսաննա Աղասյանը: Նրա բոլոր աշակերտները, որոնք հավատում են իրենց ուսուցչի վեհությանը, մեկ մարդու պես հաստատում են նույն այդ վեհության մեջ նրա աննման համեստությունն ու լուսավորվածությունը: Համեստ ու խոնարհ, սիրող ու ներող հոգի ուներ նա՝ հեռու ամեն տեսակ բամբասանքներից ու ատելությունից: Ազատ էր ինչպես իր տողերում, այնպես էլ տողերից դուրս՝ իրական կյանքում:

«Տո՛ւր ինձ, Տե՛ր, հոգու փրկության մի ելք» ստեղծագործության մեջ բանաստեղծն աշխարհն զգում է, ընկալում ժամանակաշրջանն ամբողջությամբ: Նա տեսնում է նույն անկատար մարդուն, որ իրենից դարեր առաջ պատկերել էր Նարեկացին՝ մարդուն կատարելության ուղի հասցնելու փնտրտուքով: Բանաստեղծի հիասթափությունը խորն է ոչ միայն այս բանաստեղծությունում, որի համար էլ արյունոտված քառուղիներում Տիրոջից խնդրում է «դահիճի ձեռք, հոշոտողի խելք»՝ անմեղի դերում»:

Հավատարիմ մնալով իր նախորդներին՝ նրա բանաստեղծությունների կենտրոնում հայրենիքն է՝ մերթ ողբերգական, մերթ մրգաշատ հայրենի բուրաստան: Ինչպես նկատում ենք, հայրենիքի թեման բազմազան զգացումներ է առաջացնում բանաստեղծի հոգում: Տանջալի ապրումներից, հիասթափությունից դեպի Վահագնի ոգով պայքարելու կամք, որոնք նա պատկերում է իր բանաստեղծական հայելիով՝ ուղիղ հայելիով. համեմատել՝ *«Կանաչ կրակ է իմ բարդին հագել.// Կանաչ ցավի մեջ բույնն այրվում է,// Կանաչ մի ցավից խելագարվում է,// Կանաչ արցունքն է աչքին ցամաքել//Օ՜, երկնի՛ր, երկնի՛ր, ծիրանի՛ դու ծով,//Դարն իմ լեզվի տակ աղետ է ծամում,//Օ՜, երկնի՛ր Վահագն, կրակի լույսով, Չեմ ուզում ապրել քարանձավում:*

Հավատարիմ իր գեղարվեստական դաստիարակությանը՝ նրան ձգողը ժամանակի էությունն էր և ո՛չ կյանքի խաբուսիկ նշանները: Ժամանակի բերած խոսքը, բայց ո՛չ երբեք աստառը, հայրենի երկրի սերը, նրա տառապանքներով տառապելը, բայց ո՛չ երբեք հայրենիքին նվիրված լինելու աղմկարար հավաստիացումը: Բանաստեղծն ապրում է իր ժամանակը, իր օրերի ոչ միայն վեհությունը, այլև նրա ողբերգական շունչը.

*…Ծնվում է ցավի ճիչն անզգա,*
*Ու խարանվում են և՛ հավատ, և՛ գութ,*
*Այստեղ ապրում էր մի ողջ ժողովուրդ,*
*Ուր հիմա օջախ ու տանիք չկա…*

*Բնահանվել է բովանդակ մի գյուղ՝*
*Թշնամու ձեռքով այրվել ծերից ծեր.*
*Իսկ գյուղից վերև սահման են գծել*
*Գերեզմանոցի խաչքարերը սուրբ…*

Անհնար է չզգալ տողերի անկեղծությունը, որ պարտադրված չէր, խոր տառապանք նշմարելի չէ, բայց հաճելիորեն թեթև է, դյուրահաղորդ, ստույգ, հատու շեշտադրումներով:

Այսպիսին էր Վաղարշակ Գաբրիելյանը: Նա իր գրական մուտքով ազդարարեց ոչ միայն իր հաջող քայլը, այլև ցույց տվեց այն կենսահողը, որի մեջ խրված են իրեն սնուցող արմատները և միաժամանակ նորարարության այն նրբերանգները, որոնք իրեն տանում են դեպի ինքնատիպություն:

Վաղարշակ Գաբրիելյանը մահացել է 2008 թվականի հունիսի 29-ին և ամփոփվել հարազատ գյուղի գերեզմանոցում:

**Նանիկ ԱՂԱՍՅԱՆ**

***Վաղարշակ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ***

### ՂԱՐԱՆՉԻ

Օրը մթնում է լեղաճաք արկից,
Կիրճերի վրա արյուն է կաթում.
Մանուկ արևն է այնտեղ գլխատվում,
Եվ գլխատվում են ծառերը զարկից…

Բարձունքի վրա արթուն եմ նորից,
Գիշերվա ծանր խոհերն եմ ծամում,
Արևն իր արնոտ գլուխն է հանում
Այս անմարդկային սպանդ-ժխորից…

Ապականվում է լույսը իմ հոգում,
Եվ ծանրանում է խաչը իմ կրծքին.
Ես՝ մեղավորս, ցավում եմ կրկին…
Ապականվում է լույսը իմ հոգում…

Ծնվում է ցավի ճիչը անզգա,
Ու խարանվում են և՛ հավատ, և՛ գութ,
Այստեղ ապրում էր մի ողջ ժողովուրդ,
Ուր հիմա օջախ ու տանիք չկա…

Բնահանվել է բովանդակ մի գյուղ՝
Թշնամու ձեռքով այրվել ծերից ծեր,
Իսկ գյուղից վերև սահման են գծել
Գերեզմանոցի խաչքարերը սուրբ…

Օրն աթնանում է ճիչ ու սարսափով,
Գերեզմանոցին արյուն է կաթում,
Գերեզմանոցի քարերն են ճայթում
Գնդակ-արկերի տեղատարափով:

…….

Սերոնց այգու մեջ մոլորվել առուն,
Չգիտի ջուրն իր ո՛ր կողմը տանի.
Իր բեղիկներով որթն է շոշափում,
Ծխացող սյունը այրվում հնձանի…

Արկի բեկումից տանձենին ճեղքվել
Ու տապալվել է թոնրատան գլխին,
Կուժը կտուրից գլխիվայր ընկել
Եվ մնացել է թթենու գրկին…

Գյուղի մուտքի մոտ հուշաղբյուրը հին
Գնդակոծվել է անուն առ անուն,
Աղբյուրի վրա չոքել է ուռին,
Լալիս է, լալիս, չի հանգստանում…

* * *

Արագիլներս չվերադարձան.
Ցամաքի թախիծ է նստել բնի մեջ,
Թախծոտ կարոտ եմ լալիս բնի մեջ,
Արագիլներս չվերադարձան:

Բարդիս հիվանդ է ու խելագարված.
Միտքն ավերել է, տվել է քամուն,
Օրերն անցնում են չոր ու ամուլ,
Բարդիս հիվանդ է ու խելագարված…

Կանաչ կրակ է իմ բարդին հագել.
Կանաչ ցավի մեջ բույնը այրվում է,
Կանաչ մի ցավից խելագարվում է,
Կանաչ արցունքն է աչքին ցամաքել…

Արագիլներս չվերադարձան.
Սաղարթ է լցնում բարդին բնի մեջ,
Ամուլ տարի եմ տեսնում բնի մեջ,
Արագիլներս չվերադարձան…

### ՄԱՐՏՆՉՈՂՆԵՐԻՆ

Միհե՛ր,
Ո՞ր խորշից է քո դուռը փակվել,
Ի՞նչ խռովք է այս խուլ քարայրում,
Այս ի՞նչ հրդեհ է քառապատկվել,
Ներսից մեր գոյի տունն է այրվում:
Չէ՞ որ լինելու ժամն է հիմա,
Էլ ի՜նչ հառաչանք կամ հոգոց,
Զա՛րկ Թուր Կեծակով դավի նման
Բա՛ց քո քարերիդ դռները գոց…
Ե՛լ ու խորտակի՛ր շղթա ու բանտ,
Մարութա վանքը մեր նորոգի՛ր
Արյունոտված են արոտ ու հանդ,
Արյունոտված է խիղճն աղոթքի:
Բավ է, որ քնես քո մեջ այդչափ,
Միհերի՛ դու թոռ, Դավթի՛ որդի,
Քո մեջ պիտի որ մաղձը ճղա,
Քո մեջ պիտի որ վրեժ հորդի…
Ե՛լ ու մռնչա՛ որպես որոտ,
Տա՛ր մեզ Աստծո արդար դատին,
Դարձի՛ր կռվի ու գոյի կորով,
Հավա՛տ պատվաստիր մեր հավատին…
Ո՞ր դարում են քո դուռը փակել,
Ո՜նց ես դու այսքան խռով մնում,
Ախր մեր ցավն են քառապատկել,
Ախր մեր գոյի հարցն են քննում:

* * *

Տո՛ւր ինձ, Տե՛ր, հոգու փրկության մի ելք
Այս արյունոտված քառուղիներում,
Տո՛ւր ինձ դահիճի արյունոտ մի ձեռք,
Հոշոտողի խելք՝ անմեղի դերում…

Ինձ վարժեցրո՛ւ բութ վայրենության,
Եվ վայրագությա՛ն դու ինձ ներշնչիր,
Մարդակերությո՛ւն ներարկիր իմ մեջ՝
Մարդասպանությունն ինձ թվա չնչին…

Տո՛ւր ինձ բռնություն գործելու շնորհք,
Բռնաբարողի վայրենի մի կերպ,
Առևանգողի ձի՛րք բաշխիր դու ինձ,
Մամլի՛ր գլուխս՝ դարձրո՛ւ սեխակերպ…

Պոկի՛ր իմ միջից մարդապաշտության
Կիսաչոր ու գոս պատվաստն այս խաբող,
Վարակի՛ր հոգիս չար անհաշտությամբ,
Որ մարդուն տեսնեմ բռնության չափով…

### ՎԱՀԱԳՆ

Ո՜ւր է՝ ծնվեիր ժամ առաջ, Վահա՛գն,
Զսպեիր դարը պրկված ու պայթող,
Ուշքի բերեիր խելահեղ խելքս,
Իմ դեմ կանգնեիր հպարտ ու հաղթող:

Քո շանթարձակող հայացքի առաջ
Կապ ընկներ լեզուն իմ քաղաքակիրթ,
Կրակդ վառեր պղծում ու արատ,
Սաստեիր մարդկանց հոխորտով ու բիրտ:

Կրակ ժայթքեր քո հուր շրթունքից,
Անհաշտ ձեռքերը դագաղում խաչեր,
Հողը օրհնվեր քո սուրբ երկունքից,
Միջուկի միջից իմ խելքը աճեր:

Մարդակերների ժանիքները ցից
Դու կոխկրտեիր քո ոտքերի տակ,
Փրկեիր մարդուն կեղծից ու ստից,
Դարձնեիր բարի, ազնիվ ու շիտակ:

Օ՜, երկնի՛ր, երկնի՛ր, ծիրանի՛ դու ծով,
Դարն իմ լեզվի տակ աղետ է ծամում.
Օ՜, երկնի՛ր, Վահա՛գն, կրակի լույսով,
Չեմ ուզում ապրել ես քարանձավում:

---

Տնօրեն Գ. Գրիգորյանի և գրադարանավարուհի Ի. Աթայանի նախաձեռնությամբ կազմակերպված այցից ակնհայտ դարձավ, որ դասարանի պատերից դուրս աշակերտների սերն ու հետաքրքրությունը դեպի գիրքն ու ընթերցանությունը այս եղանակով ամրապնդելը ճիշտ մտահղացում էր և պետք է շարունակական ու օրինակելի լինի:



Իսկ ապրիլի 6-ին կազմակերպված միջոցառումը նվիրված էր Մայրության և գեղեցկության օրվան: 6-րդ դասարանի աշակերտները (դասղեկ՝ Ա.Դավթյան) իրենց սրտի անկեղծ մաղթանքները հղեցին մայրիկներին, տատիկներին և ուսուցիչներին:

Միջոցառումն ուղեկցվում էր երգերով, շվիի նվագով և ավարտվեց խորհրդանշական ծաղիկներ նվիրելով.

Քո տոնն է այսօր,
Մա՛յր իմ թանկագին,
Գալիս եմ գիրկդ կարոտով անգին,
Որ նվիրեմ սերն իմ անարատ:
Ու մի ծաղիկ նվիրում եմ քեզ,
Որում քո հանդեպ իմ սերն է անհուն,
Որ քո կյանքը դարձնի մի կանաչ գարուն:

Սուրբ Հարություն տոնի նախօրեին դպրոցի միջանցքում զատկական տրամադրություն էր տիրում: Ուսուցչուհի Ն.Օհանջանյանը ջանք ու եռանդ չէր խնայել օրվան համապատասխան շունչ հաղորդելուն, ինչին էլ հաջորդել է նրա դասղեկական 8-րդ «բ» դասարանի մասնակցությամբ Զատիկին նվիրված միջոցառումը: Վերջում երեխաները ներկաներին բաժանեցին իրենց իսկ ձեռքերով պատրաստած զատիկները և մաղթեցին ուրախ Զատիկ:

Թո՛ղ Աստվածային օրհնությունը բոլորիս հետ լինի, և մեր առջև դրված բոլոր իղձերն ու նպատակները կարողանանք ի կատար ածել:

**Ա. ԴԱՎԹՅԱՆ**
***Հադրութի միջնակարգ դպրոց***

ԱՅԼԱԶԱՆ

# ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել՝
Էլի մեծ էր նա, մեծ էր ու անգին,
Արև աչքերի լույսն է նա թափել՝
Լուսնյակ դառնալով որդոց օրոցքին….

*Հովհ. Շիրազ*



Հիրավի, հայ կնոջը նվիրված ամենագեղեցիկ և ամենաընդունված տոնն ապրիլի 7-ն է՝ Ավետման կամ, ինչպես հայտնի է, Մայրության և գեղեցկության տոնը: Մայրությունը մի ողջ աշխարհ է: Մայրը երեխայի առաջին ուսուցիչն ու ընկերն է, ամենամոտն ու ամենահավատարիմը: Հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում հայ մայրը ոչ միայն ծնել, սնել, պահել և պաշտպանել է իր զավակին, այլև սովորեցրել է լինել բարի, անաչառ, ճշմարտախոս և հայրենասեր: Իր հերթին հայ զավակը միշտ արժևորել է մոր հանդեպ սերը և այն սուրբ պահել, ինչպես հայրենիքը:

Մայրության և գեղեցկության տոնին էր նվիրված ապրիլի 22-ին Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի փոքր դահլիճում Տողի արվեստի դպրոցի սաների համերգը, որին մասնակցել են դպրոցի Նախիջևանիկի և Ստեփանակերտի մասնաճյուղերի սաները և շրջանավարտներ: Նախաձեռնության հեղինակ՝ Տողի արվեստի դպրոցի տնօրեն Սուսաննա Բալայանի խոսքով, համերգը նախատեսված էր ավելի վաղ, սակայն ինչ-ինչ պատճառներով այն հետաձգվել է: «Տոնը մեծ խորհուրդ ունի, և այն կարող ենք նշել տարվա բոլոր օրերին: Այդ իսկ պատճառով էլ, թեկուզ ուշացումով, հավաքվել ենք նշելու Մայրության և գեղեցկության տոնը»:

Համերգին հիմնականում ներկայացված էին ազգային և ժողովրդական պարեր, գուսանական, հայկական ժողովրդական երգերի շարան, ինչպես նաև՝ հայ և ռուս երաժիշտների ստեղծագործություններ:



Համերգը եզրափակեց Տողի արվեստի դպրոցի դասատու Մարատ Հարությունյանը՝ «Մա՛յրս, դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս» երգով և ջերմ բարեմաղթանքներով:

Նշենք որ, Տողի արվեստի դպրոցը Ստեփանակերտում իր գործունեությունը վերսկսել է 44-օրյա պատերազմից անմիջապես հետո և հանդիսատեսին ներկայացել մի շարք համերգային ծրագրերով:

**Նանիկ ԱՂԱՍՅԱՆ**

# ԻՄԱՍՏԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ

### ԳԻՉԻՆ ՖՈՒՆԱԿՈՇԻԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

*(Կարատե մարտարվեստի հիմնադիրը)*

- Կարատեն սկսվում է հարգանքից եւ վերջանում է հարգանքով:
- Կարատեում երբեք մի՛ հարձակվեք առաջինը:
- Կարատեն պետք է աջակցի արդարությանը:
- Ճանաչե՛ք ինքներդ ձեզ, իսկ այնուհետեւ՝ ուրիշներին:
- Բնավորությունն ու հոգին առաջնային են, տեխնիկան՝ երկրորդային:
- Դժբախտ պատահարներ տեղի են ունենում անհոգությունից ու ծուլությունից:
- Դու պետք է օգտագործես քո միտքը:
- Մի՛ կարծեք, թե կարող եք պարապել կարատե միայն դոջոյում (մարզադահլիճում):
- Կարատեն ուսումնասիրելու համար կպահանջվի ձեր ամբողջ կյանքը:
- Կարատեն նման է տաք ջրի, որը եթե անընդհատ չտաքացվի, կսառչի:
- Հաղթանակը կախված է խոցելի կետերը տարբերելու ձեր հմտությունից:
- Մի՛ մտածեք հաղթանակի մասին, մտածեք այն մասին, որ պարտություն չկրեք:
- Շարժվե՛ք ձեր հակառակորդի գործողություններին համաձայն:
- Հակառակորդի ձեռքերն ու ոտքերը համարեք սուր թրեր:
- Լքելով տունը՝ մտածե՛ք, որ ձեզ սպասում են բազմաթիվ հակառակորդներ:
- Ցածր կանգերը սկսնակների, իսկ բնական կանգերը ավագ աշակերտների համար են:
- Մի՛ մոռացեք ուժի փափուկ եւ կոշտ կիրառման, մարմնի լարման եւ թուլացման, տեխնիկայի դանդաղ եւ արագ կատարման մասին:
- Կարատեն դրե՛ք ամեն ինչի մեջ:
- Ամեն ինչին վերաբերվե՛ք ստեղծագործաբար:

### ՍԵՆՍԵՅ ՄԱՐԻՀԵՅ ՈՒԵՍԻԲԱՅԻ ԽՐԱՏՆԵՐԻՑ

*(Այկիդո մարտարվեստի հիմնադիրը)*

- Եթե ուզում ես լավ ուսուցիչ գտնել, հեռո՛ւ փախիր անտարբերից:
- Դժվար ճանապարհին կա՛նգ առ եւ նայի՛ր շուրջդ: Ով նայում է միայն ներքեւ, նա չի տեսնում աստղերը:
- Միշտ վերադարձի՛ր ակունքներին, երբեք մի՛ շփոթիր ընթացքն ու նպատակը:
- Մարդու ճշգրիտ վիճակը կարելի է որոշել նրա կեցվածքով. նստի՛ր ուղիղ:
- Ով ձգտում է ձեռք բերել հոգեւոր ու ֆիզիկական կայուն հիմք, պետք է նախ ներհայեցողությամբ զբաղվի:
- Ով պայքարում է չարի հետ՝ ատելով թշնամուն, ինքը չարի ծառան է, որովհետեւ հոգում ծառայում է հալածանքին: Ով չարությանը պատասխանում է սիրով, նա սուրբ է, որովհետեւ քչացնում է հալածանքը: Ով խուսափում է չարի հետ հանդիպելուց, նա վախկոտ է, որովհետեւ խոնարհվում է հալածանքի առջեւ: Ով հնազանդորեն համբերում է չարությանը, նա հիմար է, որովհետեւ իրեն զոհ է տալիս հալածանքին: Ով չարը բախում է չարին, նա իմաստուն է, որովհետեւ ոչնչացնում է հալածանքը:
- Միայն նա, ով կանգնած է տեղում, չի սայթաքում: Եթե դու սայթաքել ու ընկել ես, իմացիր, որ ընկնելը դեռ պարտություն չէ, եթե կարող ես նորից բարձրանալ ոտքի:

**Պատրաստեց Սոնյա ԱՎԱԳՅԱՆԸ**

# ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ՆԱԽԿԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿՈՐՑՐԱԾ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Ավագյան Անգելիա Արտակի
2. Մելքոնյան Սրբուհի Յուրիկի
3. Սարգսյան Նվեր Վլադիմիրի
4. Հայրապետյան Արթուր Սերժի
5. Սարգսյան Անի Վալերիկի
6. Գասպարյան Ալվարդ Աշոտի
7. Ղուկասյան Էմմա Սերգեյի
8. Սարգսյան Վեներա Վալերիի
9. Շաքարյան Զարինե Վագիֆի
10. Սարգսյան Արամ Սամվելի
11. Բեգլարյան Դավիթ Գառնիկի
12. Բաբայան Արման Սեյրանի
13. Մայիլյան Կարինե Մուրադի
14. Գաբրիելյան Սյուզաննա Լևոնի

# ԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2023թ. մայիսի 23-ին, ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք հետևյալ լոտերով.

**Լոտ 2 -** Հարիչ (միքսեր)՝ Steno PL60L/3VP 1 հատ, 2 հատ ամանով 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **281.805 ՀՀ դրամ**:

**Լոտ 3 -** Կրեմի սրսկիչ՝ DE DANIELI RMP83 15 լիտր, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **98.304 ՀՀ դրամ**:

**Լոտ 4 -** Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **262.144 ՀՀ դրամ**:

**Լոտ 5 -** Խմորհարիչ՝ K-M130 130կգ, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **327.680 ՀՀ դրամ:**

**Լոտ 6 -** Վառարան՝ Bassanina zoom 1212 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **655.360 ՀՀ դրամ**:

**Լոտ 7 -** Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50x70սմ (18 դարակ), 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **91.750 ՀՀ դրամ:**

**Լոտ 8 -** Խմորի գնդեր բացող սարք՝ Kemplex SF600/1400, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 229.376 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18դարակ) 7 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 72 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **138.281 ՀՀ դրամ:**

**Լոտ 10** - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18 դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ), 108 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **330.302 ՀՀ դրամ:**

Լոտ 11 - Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 425.984 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը՝ ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **294.912 ՀՀ դրամ:**

Լոտ 13 - Վառարան՝ Bassanina rotor 57 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **655.360 ՀՀ դրամ**:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **49.152 ՀՀ դրամ**:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ-ի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ-ի դեպքում՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մ/ղ հ/հ 1150012179069063:

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն կարող են հայտ ներկայացնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33»:

*Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան*

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 29.04.2023թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: